

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Դարձեալ Արիւն Կը Յոսի

Հայրենիքի երկնակամարը կրկին ամպոտած է: Դարձեալ արիւն կը հոսի քաղաքամայր Երեւանի մէջ: Սահմանի վրայ թշնամին իր գործերը կուտակած հրճուանքով կը հետեւի մեր ներքին իրադարձութիւններուն, սպասելով պատեհ առիթին, որպէսզի փորձէ ռազմական գործողութիւններով հասնիլ իր նպատակին:

Այս ճակատագրական պահուն, երբ ազգի համախմբուածութիւնը հրամայական պահանջք է, ներքին տագնապները կը յաջորդեն զիրար ու յուսալքութիւնը կը մղէ ոմանց դիմելու ծայրայեղ քայլերու:

«Սասնայ Ծռեր» անուան տակ գործող զինուած խմբակի արարքը ու այդ ընթացքին զոհերու եւ վիրաւորներու առկայութիւնը, անընդունելի նկատելով հանդերձ, չենք կրնար չարձանագրել, որ քաղաքական տարակարծութիւնները զէնքի միջոցաւ լուծելու երեւոյթը նորութիւն չէ Հայաստանի համար: Այդ մշակոյթին սկիզբ դնողները եղան անոնք, որոնք պետական ահաբեկչութեան միջոցաւ հիմքը դրին այդ գործելաոճին: Հոկտեմբեր 27-ի եւ Մարտ 1-ի ոճրագործութիւնները տակաւին թարմ կը մնան մեր ժողովուրդի յիշողութեան մէջ, մանաւանդ որ, երկու պարագային ալ պատասխանատուները տակաւին կը մնան անպատիժ:

Գիտենք, որ իշխանութիւնները ունին բոլոր լծակները ճգնելու համար այս ապստամբութիւնը եւս: Սակայն, այդ պարագային իսկ, երկրի դիմագրաւած հարցերը լուծում պիտի չստանան ու մենք պիտի շարունակենք պտտուիլ Ուոյ շրջանակին մէջ, առաջնորդուելով մէկ տագնապէն միւսը:

Ինչպիսի եզրայանգում որ ալ ունենայ այս ճգնաժամը, հետեւանքներուն համար պատասխանատու են այսօրուայ իշխանութիւնները, որոնք կամայ թէ ակամայ, անցնող քսան տարիներու ընթացքին ծախողեցան իրագործել իրենց գլխաւոր առաքելութիւնը, որ կը կայանար ժողովուրդին ծառայելու մէջ, ապահովելով անոր բարեկեցիկ ու արժանապատիւ կեանք, տնտեսական հաւասար պայմաններ, արդարադատութիւն, կոռուպցիայէ զերծ պետական համակարգ, Հայրենիքի սահմաններու պաշտպանութիւն, իսկ, ամենէն կարելորդ՝ քուէտուփի միջոցաւ իշխանափոխութեան հասնելու կարելիութիւն: Յատկապէս այս վերջինի բացակայութիւնը, կը մղեն ոմանց դիմելու ճարահատ քայլերու:

Խիստ մտահոգութեամբ հետեւելով իրադարձութիւններուն, կը յուսանք, որ ողջամտութիւնը կը տիրապետէ բոլորի մօտ ու տագնապի լուծումը կ'ապահովուի նուազագոյն ցնցումներով:

«ՄԱՍԻՍ»

## Ոստիկանութեան Կեդրոնի Գրաւումէն Ետք Երեւանի Մէջ Կը Տիրէ Լարուած Վիճակ

Թերթը մամուլի յանձնելու պահուն Երեւանի Խորենացի փողոցին վրայ կը տիրէր լարուած վիճակ, ուր ոստիկաններու եւ ցուցարարներու միջեւ քաշքշուքներ կ'ընթանային: Կը լսուէին նաեւ կրակոցներ, սակայն զոհերու մասին խօսք չկար:

Կիրակի, Յուլիս 17-ին Երեւանի Խորենացի փողոցին վրայ գտնուող ոստիկանութեան պարեկապահակային ծարայութեան (ՊՊԾ) գունդի կեդրոնը գրաւուած էր «Սասնայ Ծռեր» զինուած խմբակի անդամներուն կողմէ, որոնք կը պահանջէին Ժիրայր Սեֆիրեանի ազատ արձակումը եւ նախագահ Սերժ Սարգսեանի հրաժարականը: Չինեալները որպէս պատանդ կը պահէին խումբ մը ոստիկաններ՝ ներառեալ ոստիկանապետի տեղակալը ու Երեւանի փոխ ոստիկանապետը:

Ոստիկանութեան կեդրոնը ներխուժելու պահուն զոհուած էր գունդի փոխհրամանատար Արթուր Վանոյեանը: Վիրաւորներու մէջ էին նաեւ չորս ոստիկաններ՝ զնդապետ Արամ Յովհաննիսեանը, փոխզնդապետ Հրաչ Խոստեղեանը, ենթասպայ Գագիկ Մկրտչեանը, նկարահանող Ռոբերթ Հայրապետեանը, նաեւ յարձակումին մասնակցող թաթուլ Թամրազեանը, որու վիճակը ծանր է եւ կը գտնուի



Ոստիկանութեան կեդրոնը գրաւած «Սասնայ Ծռեր» խումբի զինեալ անդամները Խորենացի փողոցին վրայ

Երեւանի հիւանդանոցներէն մէկուն վերակենդանացման բաժանմունքը:

Յուլիս 19-ի երեկոյեան հաղորդուող տեղեկութիւններու համաձայն, ոստիկանները մի քանի շաբթով եւ բեռնատարներով փակած էին դէպի գրաւման մէջ գտնուող ոստիկանութեան կեդրոնի ճանապարհը: Սակայն, ցուցարարներուն հետ զրուցելով, Հայաստանի փոխոստիկանապետ Սամ-

ուէլ Յովհաննիսեան հանդարտութեան կոչ կ'ընէր, վստահեցնելով, որ որեւէ յարձակում տեղի չէ ունեցած:

«Սասնայ Ծռեր» խումբի անդամներուն, Ժիրայր Սեֆիրեանի եւ ոստիկանութեան միջեւ միջնորդի դեր ստանձնած «Հիմնադիր Նախախորհրդարան» կազմակերպութեան անդամ Ալեք Ենի-

Շար.ը էջ 5

## Ս. Սարգսեան Հողերու Զիջումի Մասին Հարցուցած Է Ղարաբաղցիներու Կարծիքը

Ղարաբաղ կատարած աշխատանքային այցի ընթացքին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան փակ հանդիպում ունեցած է Ղարաբաղեան շարժման ներկայացուցիչներուն հետ, որու ընթացքին, ըստ մասնակիցներու, տարածքներու զիջման մասին կարծիք հարցուցած է:

Հանդիպման մասնակցած է նաեւ Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակեանը:

Ղարաբաղեան շարժման ներկայացուցիչ Ռազմիկ Պետրոսեանի համաձայն՝ թէեւ Սերժ Սարգսեան ըսած է, որ հայկական կողմին Ղարաբաղի յարակից տարածքները զիջելու առաջարկ չէ կատարուած, բայց հետաքրքրուած է այս հարցով իրենց դիրքորոշմամբ:

«Ամէն մէկին կարծիքը հարցրէք. 90 տոկոսը սասցին՝ մենք դէմ ենք զիջումներին», - «Ազատութիւն» ռատիոկայանին պատմած է Պետրոսեան:

88-ի Ղարաբաղեան շարժման պնդած է, որ տակաւին այն տարիներուն որոշուած էր, որ տարածք կը զիջինք միայն անկախութեան դիմաց: Այժմ, իր տպաւորութեամբ, հայկական կողմին միակողմանի զիջում կ'առաջարկուի եւ իրենք այդ չեն ընդունիր: Ազատամար-

տիկ կարծիքով, Հայկական կողմին կը ճնշեն, թէեւ Սերժ Սարգսեան հանդիպման ընթացքին ըսած է, որ նման բան չկայ եւ ինք Ղարաբաղի անկախութեան ճանաչման ուղղութեամբ կ'աշխատի:

Հանդիպման մէկ այլ մասնակից, նոյնպէս Ղարաբաղեան շարժման ակտիւ անդամ Համլետ Գրիգորեան «Ազատութեան» ըսած է, որ հանդիպման եզրակացութիւնը եղած է այն, որ տարածքներու զիջման թեման դուրսէն եկած է եւ խաչծ է:

«Մենք հող յանձնելու նպատակ չունենք, այդպէս էլ սասցինք: Չեն առարկել՝ ո՛չ Հայաստանի նախագահը, ո՛չ Ղարաբաղի նախագահը, ո՛չ հին նախագահը՝ Արկարի Ղուկասեանը: Ինձ թուաց, որ թէկուզ իրենք այդպէս մանրամասն չեն արտայայտուել, թուաց, թէ բոլորս էլ նոյն կարծիքի ենք», - աւելցուցած է Գրիգորեանը:

Տարածք զիջիլը, Ղարաբաղեան շարժման անդամի խօսքով, զարաբաղցիներու համար հայաթափում կը նշանակէ, ինչ որ անընդունելի է:

Հանդիպման ընթացքին, ըստ Գրիգորեանի, տարածքներու զիջ-

Շար.ը էջ 4

## «Կուտակուած Խնդիրների` Ձեռքով Լուծման Փորձը Տանում Է Միայն Փակուղի».- ՍԴՀԿ

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն իր խոր անհանգստութիւնն է յայտնում Երեւանում տեղի ունեցող դէպքերի հետ կապուած:

«ՍԴՀԿ-ն վստահ է, որ երկրում կուտակուած խնդիրների՝ զէնքով լուծման փորձը տանում է միայն փակուղի՝ էլ աւելի խորացնելով եւ անելանելի դարձնելով ստեղծուած իրավիճակը: Հնչակեան կուսակցութիւնը խորապէս սգում է երէկ զոհուած հայ սպայի մահն ու նոր զոհերից խուսափելու համար յորդորում թէ՛ իշխանութիւններին եւ թէ՛ ոստիկանական զնդի տարածքը զէնքով գրաւածներին՝ հարցը լուծել բացառապէս խաղաղ ճանապարհով եւ թոյլ չտալ նոր արիւնահեղութիւն:

«Հայաստանը մէկ անգամ ապրել է զինուած յեղաշրջման փորձ, որից 17 տարի յետոյ դեռ կրում ենք այդ օրերին եղած սահմուկեցուցիչ յանցագործութեան հետեւանքները»:

ՍԴՀԿ  
Հայաստանի վարչութիւն

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչ է Կատարում Իշխանութեան Ներսում

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի հասարակութիւնը տագնապով սպասում ու կլանում է տեղեկութիւնները գիտուած ապստամբութեան դէպքի վայրից՝ Երեւանի ՊՊԾ գնդից, որը Յուլիսի 17-ի լուսադեմին գրոհով վերցրել են Հիմնադիր Խորհրդարանի մի շարք անդամներ: Բոլորն ուզում են տեղեկանալ ընդհանուր առմամբ, թէ ինչ է տեղի ունենում դէպքի վայրում:

Միաժամանակ, թերեւս շատ կարեւոր է նաեւ այն, թէ ինչ է տեղի ունենում այժմ իշխանութեան ներսում: Ընդ որում, ոչ միայն գուտ սուբյեկտային վարքագծի տեսանկյունից, թէ իշխանութեան որ թեւն ինչով է գրադուած, ինչ է մտածում միւսի մասին, արդեօք իշխանութեան ներսում այժմ առկայ է տեղի ունեցածի համար մեղաւոր կամ պատասխանատու փնտնելու իրողութիւն, թէ՞ դա թողնում են հանգուցալուծումից յետոյ, երբ կը չենգործարարուի ինդիքները:

Խոշոր հաշուով, իշխանութեան ներսում առկայ իրավիճակով է թերեւս պայմանաւորուելու իրադարձութիւնների յետագայ զարգացումը, քանի որ հասարակական դաշտում իրավիճակը կարծես թէ գտնուում է աւանդականի շրջանակում, եւ առկայ են բազմաթիւ շերտաւորումներ եւ «հերոսներ» ու «դաւաճաններ» աւանդական

փնտնուող, որը 20 տարի չի յանգեցրել եւ անկասկած առնուածն այդքան էլ չի հանգեցնի հասարակութեան առաւել բարձր ՕԳԳ-ի:

Հայաստանի քաղաքական դաշտում տեղի է ունեցել աննախադէպ իրադարձութիւն: Ներկայում շատ են համեմատութիւնները Մարտի 1-ի, Հոկտեմբերի 27-ի հետ: Դրանք համարժէք են լոկայնաքանով, որ ցնցում են պետութեան ներքին վիճակի համար եւ վտանգի տակ են դնում մարդկային կեանքեր: Երեւոյթի բովանդակութեան տեսանկյունից, Յուլիսի 17-ին տեղի ունեցածը լիովին տարբեր է: Եւ համեմատութիւններն այստեղ ընդամենը գիտակցութեան ինքնահոս գրաւորումներ են, որով կլանուած է հանրութեան զգալի մասը:

Յուլիսի 17-ին Հայաստանում ստեղծուել է լիովին նոր իրավիճակ, ընդ որում անկախ գիտուած ապստամբութեան վերջնարդիւնքից:

Աւելորդ է ասել, որ այդ վերջնարդիւնքում մարդկային որեւէ նոր գոհի առկայութիւնը դատապարտելի է խստագոյնս: Դա մի հարց է, որը թերեւս չի կարող լինել քննարկման առարկայ, եւ բոլոր կողմերը, որ ներգրաւուած են իրադարձութիւնները զարգացման մէջ, պարտաւոր են չանել քայլեր, որոնք կը վտանգեն մարդկային կեանքեր:

Միւս կողմից, այդ կողերը որքան կարեւոր են, միեւնոյն է արդէն կայ գոհ, ինչը հասկանալի է հետագայում խաղաղ հանգուցալուծման ճկունութեան հնարաւորութիւնը, առաւել եւս, որ թէեւ սոցցանցերում, բայց արդէն իսկ հնչել են վրէժխնդրութեան ազդակներ:

Դրան գուգահեռ, ակնյայտ է նաեւ, որ Հայաստանի հանրային դաշտում գործնականում չկան ձեւաւորուած հեղինակութեան բեւեռներ, որոնք կարող են իրենց ուժով քաշել իրավիճակը փակուղուց: Միաժամանակ, չկան նաեւ ձեւաւորուած «ուղեղային կենտրոններ», որոնք կը կարողանան չուշել հանրային արձագանքի պրագմատիկ, իրատեսական զարգացումներ:

Անվերջ պնդումները, թէ իրավիճակի համար պատասխանատու է իշխանութիւնը կամ անձամբ Սերժ Սարգսեանը, իր վարած քաղաքականութեամբ, կառավարման որակով, եւ այլն, որքան էլ արդարացի են, այդուհանդերձ ի վիճակի չեն դառնալ ստեղծուած աննախադէպ իրադարձութեան համարժէք, բաւարար արձագանք: Դրանք աւելի շուտ համահասարակական փակուղու գրաւորում են: Վերջին հաշուով, հենց այդ փակուղին է նաեւ յուսահատ ու ծայրայեղ քայլերի «խթանիչ»: Դա Հայաստանում իշխող համակարգի դէմ

պայքարի, համակարգի լիարժէք արտորոշման եւ դրա դէմ հանրային պայքարի մեթոդաբանական ճգնաժամի վկայութիւն է:

Քանի դեռ հանրութիւնն ինքը գտնուում է ճգնաժամի մէջ, նա անկարող է լինելու իշխող համակարգը մղել ճգնաժամի:

Այդ իմաստով, ներկայում առանցքային հարցը դարձել է հենց այդ՝ Հիմնադրանքի քայլը իշխանական համակարգը մղել է ճգնաժամի, թէ ոչ: Պատահական չէ, որ հենց դա էր իշխանութեան առաջին արձագանքը՝ ցոյց տալ, որ չկայ որեւէ ճգնաժամ, եւ իշխանութիւնը դուրս չի եկել իր ամէնօրեայ գործունէութեան ռեժիմից: Այդպէս է դա իրականում, թէ ոչ, անցնող 24 ժամերով զնահատելը բարդ է:

Իշխանութեան համար ռիսկը ժամանակն է, թէ հոգեբանական ինչ գործընթացներ են տեղի ունենալու ներսում, եթէ շարունակուի «պաշարման» գործընթացը:

Ներկայում, իրադարձութիւնների զարգացման հեռանկարը պայմանաւորուած է իշխանութեան ներսում տեղի ունեցող գործընթացով: Այդ իմաստով, իրավիճակը իշխանութեան ներսում իհարկէ սկզբունքորէն տարբեր է, քան 2008-ին: Միեւնոյն ժամանակ, կայ բոլոր ժամանակների համար առանցքային գործօն՝ Հայաստանի իշխող համակարգը սուբյեկտային առումով լինելով բազմաբեւեռ, այդուհանդերձ միատարր է տնտեսական կամ կապիտալի հիմքի տեսանկյունից եւ կառուցուած է հանրային բարիքի իւրացման սկզբունքի վրայ: Դա է համակարգի մոտիւլացիան, որը բացառում է «փոխգիշուումը» հանրութեան հետ:

Արդեօք իշխանութեան ներսում այժմ տեղի ունենում են մոտիւլացիոն փոփոխութիւններ:

«ԼՐԱԳԻՐ»

Անդունդ Գլորուող Պետութիւն

ԹԱՍՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

«Հիմնադիր խորհրդարանը» գիտուած ապստամբութեան միջոցով Երեւանում գրաւել է ոստիկանական շէնք, որտեղ պահուած են պատանդներ: Նրանք պահանջում են ազատ արձակել շուրջ մէկ ամիս անազատութեան մէջ գտնուող Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիրեանին, ինչպէս նաեւ Սերժ Սարգսեանի հրաժարականը: Ինչպէս յայտնի է, գոհուել է մէկ ոստիկան, կան վիրաւորներ:

Այժմ, կարծես, նեարդերի պայքար է ընթանում: Իշխանութիւնը կտրուկ քայլերի չի դիմում, յայտարարում է, որ ցանկանում են բանակցութիւնների միջոցով խնդիրը հանգուցալուծել:

Ինչու՞ տեղի ունեցաւ նման բան Հայաստանում: Այս հարցի պատասխանը ոչ միայն պէտք է փորձեն գտնել քաղաքացիները, այլ՝ նախ եւ առաջ իշխանութիւնները:

Ինչու՞ է քաղաքական մի փոքրիկ խմբաւորման համար իշխանութեան դէմ պայքարելու միակ միջոցը մնացել է՝ գիտուած ապստամբութիւնը, արիւնով ու բռնութեամբ շանտաժ անելը:

Ինչու՞ Հայաստանում բոլոր ճակատագրական սխալներից յետոյ իշխանութիւնները դասեր չեն քաղում: Խնդիրը շատ աւելի գլոպալ է, միայն հարցը «Հիմնադիր խորհրդարան», Ժիրայր Սեֆիրեան եւ իշխանութիւն հարթութիւնում չէ:

Հայաստանում խորացած խնդիրները լուծում չեն ստանում: Այսօր, երբ գիտուած ապստամբները շարունակում են գրաւուած պահել պետական կառուց, բերման էին ենթարկուած մարդիկ, որոնք թէեւ ունեն ընդդիմադիր հայ-

եացքներ, բայց որեւէ առնչութիւն չունեն Երեւանում տեղի ունեցած իրադարձութիւնների հետ: Այդ մարդկանց, առանց որեւէ հիմնաւորման հրաւիրում են ոստիկանութեան բաժիններ: Ինչու՞ է իշխանութիւնը որոշակի պահից սկսում անել ոչ աղեկատ քայլեր ու ցոյց տալ իր անանկութիւնը:

Հայաստանն այսօր, իսկապէս, բաւական բարդ իրավիճակում է յայտնուել: Ղարաբաղեան հարցում Հայաստանի նկատմամբ ճնշումներ են իրականացուած՝ տարածքների յանձնման պահանջով:

Իշխանութիւնը Ապրիլի քառօրեայ պատերազմից յետոյ մատր-մատին չտուեց՝ Հայաստանի դիրքերն ամրապնդելու ուղղութեամբ, հասարակութեանը համախմբելու, հայկական կողմի պահանջները լսելի դարձնելու, Ալիեւի սանձազերծած պատերազմը միջազգային հանրութեանը որպէս յանցագործութիւն ներկայացնելու ուղղութեամբ:

Ստացուած է՝ դրսում Հայաստանի իշխանութեանը ճնշում են, ներսում քաղաքական մի փոքրիկ խմբակ որոշում է գիտուած ապստամբութիւն իրականացնել: Սա խոշոր հաշուով, պետականութեան դէմ աւելի մեծ հարուած է, քան թշնամու կողմից մի քանի պատերազմների սանձազերծումը:

Ինչ վերաբերում է «Հիմնադիր խորհրդարանի» գործողութիւններին, ապա ամիսներ շարու-

նակ այս խումբն ապացուցել է, որ անգամ 500 կողմնակից չունի, նրանց կազմակերպած հանրահաւաքների մասնակցում էին 50-100 մարդ, որոնցից երկու տասնակը լրագրողներ էին:

Ակնյայտ է, որ «Հիմնադիր խորհրդարանը» դիմում է ծայրայեղ միջոցների՝ առաւելապէս իր քաղաքական շահն ունենալով, եւ նրանց յայտարարութիւնները, թէ դա անում են՝ «ազգի համար» բաւական աբսուրդային են: Դեռ պէտք է փորձել հասկանալ՝ նրանք ո՞ւմ նկատի ունեն: Հասարակական աջակցութիւն չունեցող քաղաքական ուժը՝ չի կարող ակնկալել ժողովրդի աջակցութիւն, եթէ չունի այդ աջակցութիւնը առօրեայում: Իսկ նման դէպքում սեփական նախաձեռնութեամբ գիտուած գործողութիւնները ներկայացնելը որպէս «ազգի փրկութեան» ազգանուէր գործ՝ այնքան էլ յուսադրող չի թւում:

Իրականում, Հայաստանը յայտնուել է պետականութեան կորստի՝ անդունդ գլորուող մի շրջանակի մէջ: Չի երեւում քաղաքական կամք իշխանութեան կողմից՝ Հայաստանը դէպի զարգացում տանելու ուղղութեամբ:

Չկայ տեսլական, ծրագիր, նպատակ, երազանք... Կայ միայն ճահճում հարստացող իշխանութիւն ու յուսահատ հասարակութիւն: Ուրիշ ոչինչ:

«ՀԱՅԵԼԻ»

2եր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Մասիս Շաբաթաթերթ ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱՅԵԱԶԱՊԱՅԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Արթուր Սաքունցը Եւ Խմբի Անդամներին Եւ Ոստիկաններին Համարում Է Ձոռ

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցը էրեքուկու ՊՊԾ շենքը գրաւուած «Սասնա ծռեր» խմբի անդամներին եւ ոստիկաններին համարում է գոհեր:

«Ձոռ այն իրավիճակի, որն իշխանութիւնը ձեւաւորել է իր ոչ պատասխանատու քաղաքականութեան հետեւանքով: Սա նմանեցնում էմ ՔԿՀ-ում գտնուող անձի եւ հիմնարկի աշխատակիցների միջեւ յարաբերութիւններին, որ անձին այլ ելք չի մնում, քան ինքնավնասում կամ ուեթիմի խախտում կատարելը»:

«Ձինուած յարձակում Երեւանում. զարգացումներ եւ հետեւանքներ» թեմայով քննարկման մասնակիցները անընդունելի են համարում զէնքի կիրառմամբ խնդիրներ լուծումը:

«Անօրինական մեթոտներով օրինական երկիր չեն կառուցում եւ խնդրի հետ կապուած բոլոր հարցերը պէտք է վերադառնան օրինական դաշտ», - ասում է ԱԺ պատգամաւոր Թեւան Պօղոսեանը:

Իսկ իրաւապաշտպան Վարդան Յարութիւնեանն էլ աւելացնում է, որ անկախ իշխանութիւնների որակից, քաղաքական գործիչը չպէտք է դիմի զէնքի:

ՊՊԾ շենքը գրաւած խումբը պահանջում է Սերժ Սարգսեանի հրաժարականը եւ Ժիրայր Սեֆիրեանի ազատ արձակումը:

«Ենթադրենք Սեֆիրեանին ազատ արձակեցին, յետոյ ինչ է լինելու: Ազատ կ'արձակեն պատանդներին, նորից կը բռնեն Սեֆիրեանին: Բան չունենալով ասելու՝ 2 անձի հետ կապուած խնդիրներ են առաջ քաշում», - նշում է քաղաքագէտ Աղասի Ենոքեանը:

100-ամեակն առանց ուեթիմի առաջնորդ Ժիրայր Սեֆիրեանը յայտարարել է, որ պատրաստ է հանդիպել Սերժ Սարգսեանի հետ՝ իրավիճակին լուծում գտնելու նպատակով: «Եւ Ժիրայր Սեֆիրեանի հետ պէտք է հանդիպի եւ վարու-



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

Ժան Աւետիսեանի եւ միւսների հետ, միայն արիւն չթափուի, ամէն ինչի պէտք է զնայ», - նման տեսակէտ յայտնեց իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանը:

Իրաւապաշտպաններն անդրադառնում են հարիւրաւոր քաղաքացիներին եւ ակտիւիստներին բերման ենթարկելու փաստին:

«Մարդիկ կան, ովքեր 14 ժամ գտնուել են անազատութեան մէջ, ուղղակի, առանց որեւէ դրդապատճառի, արդարացուած որեւէ հիմքի՝ ենթարկուել են բռնութիւններին», - ասզանգում է «Իրաւունքի գերակայութիւն» ՀԿ-ի ներկայացուցիչ Արտակ Զեյնալեանը:

Իսկ իրաւապաշտպան Արթուր Սաքունցն էլ հարց է բարձրացնում.

«Ի՞նչ է նշանակում ՀՀ քաղաքացիներին տանել ոստիկանութեան ներքին գործերի գործաս, չկայ այդպիսի բան: Հասկացանք, ոստիկանութեան բաժին, ներքին գործերի գործասը՝ դա ծառայութեան վայր է, ոչ թէ քաղաքացիական անձանց պահելու վայր, դա մէկ էլ եղել է Պինդեոսի ժամանակ, Ձիլիի ժամանակ, երբ ստադիոնում էին հաւքում»:

Առ այս պահը յայտնի չէ, թէ կոնկրետ ի՞նչ հիմքով են այդ քաղաքացիները բերման ենթարկուել:


## Իսպանիայի Փողերի Լուսցման Համար Ձերբակալուած Հայը Սերտ Կապեր Ունի Հայաստանեան «Էլիտայի» Հետ

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Յայտնի դարձաւ, որ իսպանիայում փողերի լուսցման կասկածանքով ձերբակալուել է հայ գործարար Արման Մայիլեանը: Վերջինս ոչ միայն ազգութեամբ է հայ, այլ ըստ էութեան հայաստանցի է՝ ծնունդով աշտարակցի:

Հայաստանի լայն հանրութեանը թերեւս անծանօթ այս գործարարը շատ սերտ կապերի մէջ է գործող իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Յատկապէս սերտ են նրա կապերը ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանի ընտանիքի հետ: Ըստ մեր տեղեկութիւնների՝ վարչապետի որդին՝ Արգամ Աբրահամեանը Արման Մայիլեանի երեխայի կնուէրի քաւորն է: Արգամն ու Արմանը հանդիպում են բաւականին յաճախ, թէ՛ Բարսելոնայում, եւ թէ՛ Երեւանում:

Բայց գործարարի կապերը հայաստանի «Էլիտայի» հետ չեն աւարտուում քաւոր-սանիւկութեամբ: Եթէ որեւէ պաշտօնեայ ցանկանում է անշարժ գույք ձեռք բերել իսպանիայում, ապա դրա հետ կապ-



Իսպանիայում ձերբակալուելիս գործարար Արման Մայիլեան

ուած հոգսերը իր վրայ է վերցնում հենց Արման Մայիլեանը:

Մեր տեղեկութիւններով՝ նա արդէն հասցրել է մեր բազմաթիւ «երեւելիներին» տներին ու բնակարաններին տէր դարձնել իսպանիայում:

Մայիլեանի ֆէյսբուքեան էջի պատին նրա լուսանկարն է, որտեղ, սակայն, նրա դէմքը չի երեւում, փոխարէնը ընդգծուած երեւում է ՀՀԿ-ի կրծքանշանը»:

## Արամ Մանուկեան. «Ֆինանսական Խնդիր Այլեւս Չկայ

«Ֆինանսական խնդիր չկայ, եւ իրենք [իշխանութիւնները] պէտք է այս պահին կայացնեն ոչ թէ ֆինանսական, այլ քաղաքական վճիռ: Եւ քաղաքական վճիռը կարող է լինել շատ բախտորոշ», - «Ազատութեան» հետ զրոյցում կարծիք յայտնեց ԱԺ պատգամաւոր Արամ Մանուկեանը: - «Մենք կը տուժենք՝ ընտրութիւնները կը լինեն վատը, եթէ չի լինում օրէնքը, բայց իրենք կը տուժեն եւ կ'ունենան շատ լուրջ պրոբլեմներ միջազգային կառույցների հետ, որոնք յոյս են կապել, որոնք որպէս առաջընթաց ձեւակերպել են, որ ընդդիմութեան, քաղաքացիական հասարակութեան եւ իշխանութեան համատեղ ստորագրուած փաստաթուղթը դա յաջողութիւն է»:

Եթէ Ընտրական օրէնսգրքի շուրջ ընդդիմութեան, իշխանութեան եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների միջեւ 4+4+4 ձեւաչափով ընթացած բանակցութիւնների արդիւնքում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները կեանքի կոչուեն, յաջորդ ընտրութիւնները բոլոր տեղամասերում կը տեսանկարա-



ԱԺ պատգամաւոր Արամ Մանուկեան

հանուեն, կը կիրառուեն ընտրողների մատնահետքերը ստուգող սարքեր, ընտրութիւնը կ'անցկացուի միայն նոյնականացման քարտերով:

Փոփոխութիւնները կատարելու համար վերջնաժամկէտ է սահմանուել Սեպտեմբերի 1-ը: Արամ Մանուկեանը մտավախութիւն ունի, որ կառավարութիւնը փորձում է ձախողել գործընթացը եւ չկատարել ընդդիմադիրների հետ կնքուած համաձայնագրով ստանձնած պարտաւորութիւնները:

## «Յափշտակուած Գումարները Հնարաւոր Է Նախատեսուած Են Եղել Ատոմակայանի Անվտանգութեան Համար

Ատոմակայանում յափշտակուած գրեթէ 800 միլիոն դրամը հնարաւոր է նախատեսուած է եղել կայանի անվտանգութեան ապահովման համար՝ «Ազատութեան» հետ զրոյցում, ասաց «Թրանսփարենսի ինթերնէյշնըլ» հակակոռուպցիոն կենտրոնի փորձագէտ Արտակ Մանուկեանը:

«Ակնյայտ է, որ նման կարգի, նման գումարի չարաչառումներ, կարելի է բաւականին մեծ հաւնականութեամբ պնդել, որ դա իրականացուել է անվտանգութեան հետ կապուած շինարարական աշխատանքների ծախսերում», - նշեց Մանուկեանը:

Փորձագէտ մանրամասնեց՝ իր հետեւութեան համար հիմք է հանդիսացել Ազգային անվտանգութեան ծառայութեան հաղորդագրութիւնը:

Տարածուած ԱԱԾ հաղորդագրութեան համաձայն, ծառայութեան քննչական վարչութիւնում աւարտուել է Հայկական ԱԿԿ-ում չարաչառումների առթիւ յարուցուած քրէական գործի նախաքննութիւնը: Պարզուել է, որ ատոմակայանի նախկին ղեկավարները՝ գլխաւոր տնօրէն Գ. Մարկոսեանը, նոյն ընկերութեան կոմերցիոն տնօրէն Ռ. Մովսէսեանը, ֆինանսների եւ

էկոնոմիկայի գծով գլխաւոր տնօրէնի տեղակալ Մ. Մովսիսեանը, վերանորոգման, նախապատրաստման եւ կարգաւորման բաժնի պետ, գնումների գործընթացի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար է. Ղազարեանը, ստեղծելով կազմակերպուած յանցաւոր խումբ եւ օգտագործելով իրենց պաշտօնեական դիրքը, կատարել են առանձնապէս խոշոր չափերով յափշտակութիւն՝ պետութեանը պատճառելով 783.5 միլիոն դրամի վնաս, յանցագործութիւնը բացայտուել է եւ վնասն ամբողջութեամբ յատուցուել է: Քրէական գործը դատարանում է:

Թէ ինչ կարգաւորման են ատոմակայանի նախկին բարձրաստիճան պաշտօնեաները, արդեօք նրանք անազատութեան մէջ են եւ ի՞նչ մեղադրանք է նրանց ներկայացուել, ԱԱԾ-ից դեռ պատասխան չունենք:

Արտակ Մանուկեանի խօսքով, տեղի ունեցածը վկայում է որ պետական կարեւորագոյն ձեռնարկութիւններից մէկում չի գործել ներքին վերահսկողութեան մեխանիզմը, բացի այդ՝ իրենց վերահսկողական աշխատանքներում թերացել են համապատասխան պետական ատեանները:

## «Անյարմար Է, Որ Հայաստանը 200 Մլն Դոլար Չունի, Որ Ձեռք Առնի» Իշխանեան

Հայաստանում պէտք է «թասիբի բեւեռ» ստեղծուի, որը կը կարողանայ փոխել վիճակը: Այս մասին, Արցախում կազմակերպուած քննարկման ժամանակ նշել է Հայաստանի հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեանը:

«Այսօր դանդաղ շտապելու ժամանակը չի, շտապելու ժամանակն է, ու էլի ցաւօք, գոյատեւման խնդիրը դրուում է հերոսութեան վրայ: Պետութիւնը չպէտք է հերոսութեան վրայ դրուած լինի», - ասաց նա:

Անդրադառնալով հարցին, թէ ինչպէս կարելի է դուրս գալ այդ վիճակից, երբ բանակցութիւններում քննարկուում է տարածքների վերադարձի հարցը, Իշխանեանն ասաց. «Հայաստանում պէտք է ունեւարտ կատարուեն, իշխանութիւնները հրաժարական տային, թէկուզ ինչ-որ մէկի հետ պայմանաւորուելով, բայց դա չեն անելու: Երկրի ուեթեղացման հիմքը տնտեսական զարգացումն է: Անյարմար է, որ Հայաստանը 200 մլն դոլար չունի, որ զէնք առնի, վարկով է առնում»:

# ԼՈՒՐԵՐ

## Արցախում Զորավարժութիւններ են



Զորավարժութիւններուն հսկող Պաշտպանութեան Բանակի սպաները

Արցախի գինուած ուժերուն Յուլիսի 18-ից մեկնարկել են բազմաստիճան շտաբային գորավարժութիւններ, որին մասնակցում են ՊԲ վարչութիւնը, միաւորումներ, գործառնի եւ գումարտակների հրամանատարական կազմը, շտաբները, ղեկավարման եւ ապահովման մարմինները:

Զորավարժութեան նպատակն է կատարելագործել գինուած ուժերի ղեկավարման համակարգը, հրամանատարների ու շտաբների գործնական ունակութիւնները, դրանց պատրաստութեան եւ փոխգործակցութեան մակարդակը, ինչ-

պէս նաեւ բարձրացնել բոլոր օղակի ղեկավարման մարմինների մարտավարամասնագիտական կարողութիւններն ու բարոյահոգեբանական յատկանիշները, ներգրաւուած սպայակազմի՝ իրադրութեան գնահատման եւ որոշումներ ընդունելու ունակութիւնները, դաշտային վարժուածութեան մակարդակը:

Զորախաղերի շրջանակում իրականացուած է մասնակից գործառնի կցագրուած սպայակազմի մասնակի լրահամալրում, անց են կացուած մարզումներ, ստուգում մարտական ուժի մոլ աշխատելու ունակութիւնները:

## ԼՂ քաղաքական Գործիչները Տարածքներ Յանձնելուն Կտրականապէս Դէմ են

ԼՂ Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալեանը պնդում է, որ Ղարաբաղի ներկայ տարածքն ամբողջութեամբ հայկական է եւ իրենք պատրաստ չեն որեւէ տարածք զիջել: Նա վստահ է, որ խնդրի լուծման համար պէտք է ուժեղ պետութիւն կառուցել եւ պահպանել սահմանները:

«Ատրպէյճանի որդեգրած քաղաքականութիւնը, միջնորդների՝ հաւասարութեան նշան դնելու հանգամանքը մեզ յուշում են, որ յուսալ, որ վերջիվերջոյ վաղը չէ միւս օրը պայմանագիր կատարագրուի եւ հարցի լուծում կտրուի... այսինքն՝ ես չեմ հատում, չեմ պատկերացում: Ես էլի եմ ասում՝ հարցը մեր ձեռով արդէն լուծում է ստացել, եւ մենք պարտաւոր ենք հաստատուն մնալ ու պահպանել մեր սահմանները», - «Ազատութեան» հետ զրոյցում նշեց Բալեանը:

Ղարաբաղի խորհրդարանի ընդդիմադիր պատգամաւոր Հայկ Նաւոսեանն էլ վստահ է, որ իրենց քաղաքական գործիչներից ոչ ոք «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց» տարբերակին կողմ չէ, քանի որ դա կը վտանգի Ղարաբաղի գոյութիւնը. - «Վերջին տարիների միջազգային իրադարձութիւնները ցոյց են տալիս, որ թղթի վրայ ամրագրուած որեւէ միջազգային երաշխիք չի գործում: Ատրպէյճանի վարչապետը ցոյց է տուել, որ այս հակամարտութեան մէջ մենք ունենք մի եղանակ՝

պէտք է ապահովենք ուժերի բալանս, պաշտպանողական զէնք ձեռք բերենք եւ պատրաստ լինենք պատերազմի: Մա հարցի լուծման միակ տարբերակն է, որովհետեւ Ատրպէյճանն ինքը պատրաստ չէ փոխզիջումներով հարցի լուծման»:

Պաշտօնական Ստեփանակերտը նման առաջարկի մասին տեղեակ չէ, «Ազատութեան» հետ զրոյցում ասաց ԼՂ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբեանը: Նրա կարծիքով դրանք ընդամենը խօսակցութիւններ են: Նման հարցեր քննարկելու համար, նրա խօսքով, պէտք է վերականգնուի բանակցային ձեւաչափը եւ Ղարաբաղը պէտք է վերադառնալ բանակցային սեղան: Այլ դէպքում, եթէ Ղարաբաղը որոշման ընդունմանը չմասնակցի, ապա այն չի կարող կատարել:

«Այսպիսի առաջարկ չկայ, այսպիսի փաթեթ պաշտօնական Ստեփանակերտին չի ներկայացուել: Հիմա ինչի՞ մասին մենք կարող ենք խօսել, սկսենք երեւակայել: Բայց ինչո՞ւ պէտք է այս տարբերակը երեւակայենք, ոչ թէ ինչ-որ այլ տարբերակ», - հարցնում է Բաբեանը:

Բաբեանը շեշտեց, որ երբ պաշտօնական առաջարկ լինի, այդ ժամանակ էլ կը քննարկեն հարցը, բայց մի բան ըստ նրա հաստատ է՝ Ղարաբաղը ոչ կարգավիճակի, ոչ էլ սահմանների առումով անցեալին չի վերադառնայ:

## Հողերու Զիջումի Մասին

Շարունակուած էջ 1-էն

ման թեման քննարկելով, անդրադարձ եղած է նաեւ ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին կորսնցուցած տարածքներուն եւ

եզրակացուած է, որ անոնք պէտք է ետ բերել:

Յառաջիկային Սերժ Սարգսեան կրկին հանդիպում պիտի ունենայ Ղարաբաղի մէջ՝ այս նոյն հարցով:

## Նիսում Ահաբեկչութեան Ժամանակ Զոհուած Հայը Երկու Երեխաների Մայր Էր



Նիսում Յուլիսի 14-ին ահաբեկչութեան հետեւանքով մահացել է Հայաստանի քաղաքացի՝ 24-ամեայ Արեւիկը:

NEWS.am-ի տեղեկութիւններով՝ երիտասարդ հայ կինը երկու երեխաների մայր էր, տնակատարութեանը մասնակցում էր երեխաների, ամուսնու եւ սկեսուրի հետ: Նշենք, որ ընտանիքը բնակուած է Նիսում:

Հայաստանի ԱԳՆ տուեալներով, Նիսում ահաբեկչութիւնից ՀՀ երկու քաղաքացի է զոհուել: Միւս զոհը 34-ամեայ կին է, որը մանկահասակ երեխայ ունի: Իր հերթին Հայ եկեղեցու Նիսի հոգեւոր հովիւ Հայր Գրիգոր արեղայ Սաչատրեանը NEWS.am-ին յայտնել է, որ վիրաւորների մէջ կայ երեք հայ:

Յիշեցնենք, որ Յուլիսի 14-ի երեկոյեան՝ տեղական ժամանակով ժամը 22:30-ի սահմաններում, Նի-

սի Անգլիական ափին հաւաքուած մարդկանց խմբի մէջ մեծ արագութեամբ բեռնատար էր մխրճուել: Վարորդը մարդկանց մէջ էր մխրճուել Բաստիլի գրաւման օրուայ տօնական հրավառութեան ժամանակ: Բեռնատարը, մօտ 2 կմ զիգագաձեւ շարժուելով, փորձել է հնարաւորինս շատ մարդկանց ճգմել: Յետոյ վարորդը կրակ էր բացել մարդկանց վրայ: Ոստիկանութեան գործողութիւնների արդիւնքում նա սպանուել է: Բեռնատարի մէջ յայտնաբերուել է մեծ քանակութեամբ զէնք եւ պայթուցիկ:

Ըստ վերջին տեղեկութիւնների՝ զոհուել է 84 մարդ, աւելի քան 18-ի վիրահակ ծայրահեղ ծանր է: Վարորդը Ֆրանսիայի եւ Թունիսի քաղաքացի է: Նա 31 տարեկան է: Նախկինում ոստիկանութեան ուղարկութեան կենտրոնում էր յայտնուել գողութեան եւ խուլիգանութեան համար:

## Կրեմլն Անհանգստացած է Հայաստանում Տեղի Ունեցածով

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը մեկնաբանել է Հայաստանում, Ղազախստանում եւ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձութիւնները: Կրեմլի ներկայացուցիչն ասել է, թէ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձութիւններն անհանգստացնում են Մոսկուային: Պեսկովի խօսքով, սակայն, դրանք չի կարելի նոյնացնել:

«Մի դէպքում խօսք է գնում պետական յեղաշրջման մասին, ինչը բերել է բազմաթիւ զոհերի, միւս երկու դէպքերում՝ քրէական տարբեր դրսեւորումների», - ասել է նա: Նախագահի մամուլի քարտուղարը յաւելել է, որ իրավիճակը սահմանին իրենց կողմից հսկուած է, իսկ անվտանգութեան ապահովումը իրականացուած է

բարձր մակարդակով: Միեւնոյն ժամանակ Պեսկովն ընդգծել է, որ Մոսկուան կը ցանկանար իր հարեւաններին տեսնել որպէս կայուն եւ բարգաւաճող երկիր: Իր հերթին, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն անվտանգութեան խորհրդի նիստ է հրաւիրել, որտեղ յայտարարել է, որ անհանգստացած է Բելառուսի շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններով:

«Այն, ինչ կատարուած է Ուքրանիայում, Թուրքիայում, Հայաստանում, Ղազախստանում, իրադրութիւնը շատ ծանր է, եւ մենք, ինչ էլ ըստ լինի, պէտք է պահպանենք մեր երկրի խաղաղութիւնն ու հանգստութիւնը», - նրա խօսքերն է մէջբերում բելառուսական Բելտա գործակալութիւնը:


## Զաւախքի Ոճրագործութեան Դրդապատճառը Յայտնի

«Իրաւունք» թերթը գրում է. «Ախալքալակի շրջանի հայաբնակ վաչխան գիւղում Յուլիսի 10-ի գիշերը հինգ հոգանոց հայ ընտանիքին դաժանաբար սպանած տղամարդը, նախնական վարկածով, տուն է մտել գողութեան նպատակով, քանի որ բաւականին պարտքեր է ունեցել: Այս մասին մեզ հետ զրոյցում, անդրադառնալով դաժան սպանութեան գոհ դարձած Քաջոտեան ընտանիքի եւ նրանց սպանութեան մէջ մեղադրուող Նոդար Ակոպովի կատարած յանցանքին, ասաց Վրաստանի հայազգի

պատգամաւոր Սամուէլ Պետրոսեանը՝ նկատելով.

«Սկզբում շրջանաւում էր նաեւ բռնաբարութեան վարկածը, սակայն այն, կարծես թէ, բացառուել է: Այժմ գողութեան վարկածն է քննուում: Ախր ոճրագործը վատ յարաբերութիւնների մէջ էլ չի եղել այդ ընտանիքի հետ: Թէ ինչն է խելքին բերել նման ոճրագործութիւն կատարել, փորձում է հասկանալ կողմը: Ասում են, որ նա գողութեան պահին պարզապէս խուճապի է մատնուել, երբ տանտիրուհին ճանաչել է նրա ձայնը»:

### ԱՆԻՆ ԸՆԴԳՐԿՈՒԱԾ Է ԵՌԻՆԵՍԿՕ-Ի ԴԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՑԱՆԿՈՒՆ ՄԷՋ



Միջնադարեան Հայաստանի Անի մայրաքաղաքը ընդգրկուած է ԵՌԻՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգութեան ցանկին մէջ: Որոշուած է կայացուած է ԵՌԻՆԵՍԿՕ-ի Մշակութային ժառանգութեան կոմիտէի 40-րդ նիստին ընթացքին: Այս մասին կը տեղեկանանք ԵՌԻՆԵՍԿՕ-ի պաշտօնական կայքէջէն: Յայտը ներկայացուցած էր Թուրքիան:

ԵՌԻՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգութեան 40-րդ նիստի բոլոր մասնակիցները հասկցան, որ Անին հայկական է՝ գրած է Հայաստանի ԵՌԻՆԵՍԿՕ-ի անդամ յանձնաժողովի գլխավոր քարտոզար Վահրամ Կաթոյեան, ֆեյսպուքի իր էջին մէջ:

ԵՌԻՆԵՍԿՕ-ի Մշակութային ժառանգութեան կոմիտէի 40-րդ նիստը տեղի ունեցաւ Ստամպուլի մէջ:

Անիի մասին առաջին իշատակումներուն կը հանդիպինք միջնադարի 5-րդ դարին՝ որպէս Կամսարական իշխանական տան ամբողջներէն մէկը: Հայ մատենագիրներէն այդ մասին կը վկայեն Եղիշէ

Վարդապետն ու Ղազար Փարպեցին: 961-1045 թուականներուն Անին Բագրատունիներու թագաւորութեան մայրաքաղաքն էր: Անին յայտնի է որպէս «հազար ու մի եկեղեցիներու քաղաք», որոնցմէ առաւել եւս յայտնի էր կաթողիկոսանիստ Մայր տաճարը

Անին լքուած է 1319-ի երկրաշարժէն յետոյ: Աւանդութիւնը Անի քաղաքի վերջնական ամայացումը կը կապէ 1319-ի երկրաշարժին հետ, սակայն Երեւանի արձանագրութիւններէն մէկուն մէջ անեցի Շապաղաթինը 1364-ին կ'անիծէ Անին քանդողները: 14-15-րդ դարերու կտրուած դրամները նոյնպէս կ'ապացուցեն, որ կեանքը քաղաքին շարունակուել է: 16-րդ դարին Անին արդէն փոքրիկ գիւղ էր: Ըստ երեւոյթին, քաղաքին մեծ հարուած հասցուցած էին Լենկթեմուրի արշաւանքները: 18-րդ դարին Անին աւերակների կոյտ էր եւ կը պատկանէր թուրք բեկերուն: 1878 թուականին այն անցաւ Ռուսաստանին: 1920 թուականի Ալեքսանդրապոլի պայմանագրով Անին յանձնուել է Թուրքիային:

### Երեւանի Մէջ Կը Տիրէ Լարուած Վիճակ



Երեւանի մէջ կատարուող ձերբակալութիւններն մեկու ընթացքին

### Շարունակուած էջ 1-էն

գոմշեան յայտարարեց, որ իշխանութիւնները կը միտին խզել բանակցութիւնները:

Ենիգոմշեան, որ լրագրողներուն հետ կը խօսէր ՊՊԾ կեդրոնի հարեւանութեամբ գտնուող Խորենացի փողոցին վրայ, նաեւ ըսաւ, որ եթէ մինչեւ կէս ժամ «Սասնայ ծռեր» ջոկատի տղոց հետ հեռախօսային կապը չվերահաստատուի, ապա հասկնալի կը դառնայ, որ իշխանութիւնները մտադիր են խզել ընթացող բանակցութիւնները: Ան ըսաւ, որ մինչեւ երէկ գիշեր բանակցութիւնները կ'ընթանային եւ իրավիճակը չէր գտնուէր փա-

պուղիի մէջ: «Ես այսօր երեկոյեան ժամը 7:00-ին իշխանութիւններէն պատասխան մը պիտի ստանայի եւ փոխանցէի «Սասնայ ծռեր» ջոկատի տղոց», - ըսաւ Ենիգոմշեան, յայտնելով նաեւ, որ ջոկատի տղաքը աւելի վաղ, իր միջոցաւ հարցի հանգուցալուծման վերաբերեալ առաջարկ մը ներկայացուցած էին իշխանութիւններուն: Ան խօսելով խնդրին գինուորական լուծում գտնելու կամ հաւանական գրոհի մը մասին ըսաւ, որ «այդպիսի պարագային ղէպքերու ամբողջ պատասխանատուութիւնը ես կը ղնեմ գործող իշխանութիւններու ուսերուն, ու մտավախութիւններ ունիմ, որ ղէպքերը կրնան աւարտիլ

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ԻՆՔՆԱՇԵՆ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐՈՒ ՅԱՅՏԱԲԵՐՄԱՆ ԵՒ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ ԿԸ ՁԵՈՆԱՐԿԵՆ



Յուլիս 11-ին, ՀՀ գինուած ուժերու խաղաղապահ ինժեներական գումարտակին մէջ մեկնարկած են ինքնաշէն պայթուցիկ սարքերու յայտնաբերման եւ վնասագերծման (IED) երեք շաբաթ տեւողութեամբ դասընթացները: Դասընթացները ձեռնարկած են Եւրոպայի մէջ ԱՄՆ-ու ցամաքային զորքերու ինքնաշէն պայթուցիկ սարքերու ղէմ պայքարի ուսումնական կեդրոնի հրահանգիչները:

Այս դասընթացը միջազգային անվտանգութեան ապահովման աջակցութեան 2015թ. Սեպտեմբերին ՄԱԿ-ի խաղաղապահութեան զագաթաժողովի ընթացքին ՀՀ ստանձնած պարտաւորութիւններու՝ ինքնաշէն պայթուցիկ սարքերու յայտնաբերման ու վնասագերծման անձնակազմի եւ մինչեւ 2017թ. վերջն ինքնաբաւ կարողու-

թիւններ ապահովելու նախապատրաստական փուլի հիմնաքարերէն մէկն է:

Դասընթացը կեդրոնացած է ինքնաշէն պայթուցիկ սարքերու վերաբերեալ հետախուզական տուեալներու հաւաքման, ուղղորդում, ձեռքի ակնորսիչներով յայտնաբերման ու վնասագերծման տեսական եւ գործնական վարժանքներու վրայ: Ամերիկեան կողմը Համաշխարհային խաղաղապահ գործողութիւններու նախաձեռնութեան (GPOI) ծրագրի շրջանակներուն պատրաստակամութիւն է յայտնած աջակցիլ ո'չ միայն դասընթացներու պարբերաբար կազմակերպման, այլ նաեւ ինքնաշէն պայթուցիկ սարքերու յայտնաբերման եւ վնասագերծման սարքաւորումներու, տեխնիկայի ձեռքբերման:

### Ոչ եւս է բանաստեղծ Դաւիթ Յովհաննէսը

Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է բանաստեղծ Դաւիթ Յովհաննէսը: Այս մասին տեղեկութիւնը տրուած է Հայաստանի Գրողներու Միութեան կողմէ: 71 Տարեկան Յովհաննէս հեղինակ է տասնեակ բանաստեղծական երկերու: Ան Արտեմ Յարութեանի, Հէնրիկ Կոպեանի, Յովհաննէս Գրիգորեանի, Սլաւիկ Զիրոյեանի եւ Յակոբ Մովսէսի կողքին կը համարուի արեւելահայ արդի հայ բանաստեղծութեան հիմնադիրներէն: Տպագրած է չուրջ բանաստեղծական հատորներ, որոնցմէ իշատակութեան արժանի են՝ Մեզանից հետո ուժեղ ու չաղթանդամե, Քաղաքային ձմեռե, Յաւերժական հայրը - այլ բանաստեղծութիւններ: Նշենք, որ



Յովհաննէս 1999-էն 2003 ինկող ժամանակաշրջանին եղած է ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր:

ողբերգական ելքով»:

Ինչ կը վերաբերի իշխանութիւններուն, ղէպքէն 72 ժամ յետոյ իսկ կը տիրէր ամբողջական լուծութիւն: Սկզբնական ժամերուն միայն տեղեկութիւն տարածուեցաւ, որ Սերժ Սարգսեանի մօտ տեղի ունեցած է խորհրդակցութիւն:

Միւս կողմէ, վերջին օրերուն Երեւանի մէջ տեղի ունեցան մեծ թիւով ձերբակալութիւններ, որոնք իրաւապաշտպան կազմակերպութիւններու կողմէ նկատուեցան հակաօրինական:

Բազմաթիւ կուսակցութիւններ եւ քաղաքական գործիչներ հանդէս եկան յայտարարութիւններով, կոչ ընելով կողմերուն, որպէսզի հարցի լուծումը ապահովուի բացառապէս

խաղաղ միջոցներով:

Ազգային ժողովի պատգամաւոր Զարուհի Փոստանճեան առաջարկեց, որ պէտք է ստեղծել ժամանակաւոր կառավարութիւն:

Զարուհի Փոստանճեան համոզմունք յայտնեց, որ Հայաստանի մէջ ոստիկանութիւնը չվերահսկեր կացութեան եւ փոխարէնը քաղաքացիներու հանդէպ ճնշումներ կ'իրականացնէ:

Ըստ պատգամաւորին, Սերժ Սարգսեան պէտք է երթայ Խորենացի փողոց եւ անձամբ վարէ բանակցութիւնները՝ ապստամբներուն հետ:

Փոստանճեան ըսաւ, որ պէտք է ստեղծենք ժամանակաւոր կառավարութիւն, որպէսզի հսկէ ապագայ ընտրութիւններուն վրայ:

### ՀԱՅԱՋԳԻ ՊԱՏԳԱՄԱԲՈՐՆԵՐԸ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ, ՈՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵՋ ԲՈՒՆԱՊԵՏԱԿԱՆ ՌԵԺԻՍՐ ԿԸ ԽՈՐԱՆԱՅ



Թուրքիայի ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության հայազգի պատգամաւոր Սեյրնա Դողանը, «Ազատութեան» հետ գրոցի ընթացքին մեկնաբանելով անցած շաբաթ երկրին մէջ տեղի ունեցած ռազմական յեղաշրջման փորձը, մասնաւորապէս, նշեց՝ «Ժողովրդավարական համակարգերուն մէջ ռազմական յեղաշրջումներն անընդունելի են՝ անկախ նախաձեռնողի՝ ով ըլլալու հանգամանքէն եւ պատճառէն: Ես կը դատապարտեմ Թուրքիայի մէջ տեղի ունեցած յեղաշրջման փորձը: Թուրքիայի առանց այդ անոր ալ վիճելի ժողովրդավարութիւնը անգամ մը եւս հարուած ստացաւ: Թէ ինչեր թաքնուած են յեղաշրջման ետեւը, դեռեւս յայտնի չէ: Իհարկէ, կարելոր է այս ամէնը ջուրի երես հանել, բայց սակայն անկախ կարելոր բան մը կայ, այն է՝ յեղաշրջումներն ամբողջութեամբ կանխելով՝ քաղաքական միջոցառումները: Իսկ այս հարաւոր է միայն անկախ շատ ժողովրդավարութեան միջոցով: Մտաւախութիւն ունինք, որ «Արդարութիւն եւ զարգացում» իշխող կուսակցութիւնը յեղաշրջման այս փորձը կ'օգտագործէ իր տոտալիտար ռեժիմը ա'լ անկախ ռեժիմացնելու համար:

Փաստօրէն, դեռ իրադարձութիւններու բովանակումը մէջ, արդէն 2774 դատաւոր եւ դատախազ է աշխատանքէն հեռացուած: Մենք պիտի չենթարկուինք ոչ ռազմական յեղաշրջումներուն, ոչ ալ ԱԶԿ-ի քաղաքական յեղափոխութիւններուն: Մենք ա'լ անկախ պիտի պայքարինք ժողովրդավարութեան չափանիշները բարձրացնելու համար: Մենք պարտաւոր չենք ընտրութիւն կատարել այս առիթը օգտագործող իշխանութեան կողմէ հրահրուող

քաղաքական իսլամիստներու եւ յեղափոխականներու միջեւ: Երբորդ ճանապարհը՝ ժողովրդավարութիւնը, միշտ ալ հնարաւոր է»:

Թուրքիայի Մեջլիսի ժողովրդական Դեմոկրատական կուսակցության անդամ Գարօ Փայլան իր կարգին հաստատած է «Թուրքիան երբեք ժողովրդավարական չէ եղած, ուղղակի մենք որոշ ժամանակ ունէինք իսլամադարձութեան գործընթացի, որու ընթացքին ժողովրդավարութեան որոշ դրսեւորումներ եղան, սակայն, ցաւօք, անցած տարուայ Յունիսի ընտրութիւններէն յետոյ էրտողանի իրականացումը «պաշտական յեղաշրջում» է: Նախեւառջ ան ազատուեցաւ խորհրդարանէն, հիմա ան է որ բոլոր հրահանգները խորհրդարանին կու տայ: Չունինք անկախ դատական համակարգ ու օրէնքի գերակայութիւն: Այս պայմաններուն երկիրը ամբողջութեամբ կը ղեկավարէ էրտողանը եւ կը գործէ որպէս բռնապետ:

Ուստի այս պայմաններուն, երբ չկան ժողովրդավարական գործընթացներ, երբ խորհրդարանը կ'անտեսուի, զինուորականները ուժ կը ձեռք բերեն: Զինուորականները ազատ գործողութիւններ կ'իրականացնէին քրտական բնակավայրերուն մէջ: Էրտողանը զինուորականներուն անձեռնմխելիութիւն տուած էր՝ անոնք իրականացնելու համար: Այս ուղին բանալու պարագային օր մը զինուորականները պէտք է սպաննէին քիւրտներուն, իսկ միւս օրը կարող էին ուղղել իրենց գէնքերը քու դէմ: Այդ է որ տեղի ունեցաւ երէկ: Զինուորականներն ուղղեցին իրենց գէնքերը կառավարութեան դէմ: Միաժամանակ պէտք է հասկանալ, որ հիմա էրտողանը օգտագործելու է տեղի ունեցածը ընդդիմութենէն ազատուելու համար»:

### ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԿԸ ՅԻՇԵՑՆԵ ՄԱՅԱՊԱՏԺ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԵՄ արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆետերիքա Մոկերինի,

Թուրքիոյ իշխանութիւններուն չիշեցուցած է, որ մահապատժի կիրառումի վերադարձը անընդունելի է Թուրքիոյ եւ ԵՄ միջեւ կնքուած համաձայնագիրին պայմաններէն մէկն է եւ կը շարունակէ պարտադիր ըլլալ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագրերու կանոններով:

«Մահապատժ ընդունող երկիր մը չի կրնար Եւրոպական

Միութեան անդամ ըլլալ», - յայտարարած է Մոկերինի:

«Թուրքիա Եւրոպայի Խորհուրդի կարելոր անդամ մըն եւ պարտաւոր է հետեւիլ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնութեան, որ յստակ դիրքորոշում ունի մահապատժի մասին», - յաւելած է Մոկերինի:

Նշենք, որ Թուրքիոյ մէջ եղած զինուորական յեղաշրջումին ձախողումէն ետք նախագահ Ռէճեփ Թայյէպ էրտողան յայտարարած էր մահապատժի մասին օրէնքին հնարաւոր վերականգնման մասին:

### ՀԱԼԵՊ ԻՐ ԱՄԵՆԵՆ ԾԱՆՐ ՕՐԵՐԸ Կ'ԱՊՐԻ. ՇԱՅԵ ՄԻՆԱՍԵԱՆ

«Հայկ պի ամէնէն ծանր օրերը կ'ապրի», - «Արեւելք»-ին ըսաւ Հայկ-պի ՄԴՀԿ վարիչ Մարմնի անդամ Շահէ Մինասեան: Մինասեան, որ նոյնպէս անդամ է «Հայկ պի շտապ օգնութեան գործադիր մարմին»-ին, յոյս չայտնեց, որ տիրող ծանր կացութիւնը կարող կերպով կը բարելաւուի եւ շրջանին դարձեալ իսլամադարձութիւն կը տիրէ:



Մինասեան նշեց՝ իսլամադարձութեան օգնութեամբ անհաբեկիչ զինեալներուն կատարած հրթիռարձակումներուն պատճառները, որ Սուրիոյ բանակը այսօրուան դրութեամբ յաջողած է պաշարման օղակի տակ առնել գանդուք ու փակել անոնց համար հիմնական համարուող «Գասթէլօ»-ի ճանապարհը: Ըստ Մինասեանի, Սուրիոյ բանակը ամէն գնով պիտի փորձէ զինեալներ անձնատուր դարձնել եւ յոյս չայտնեց, որ զինեալները կը յանձնուին երկրի օրինական բանակին: Մինասեան նաեւ պատմեց, որ Հայկ պի «Շտապ օգնութեան մարմին»-ը կը շարունակէ իր գործունէութիւնը եւ իրենց համար ամէնէն հիմնական խնդիրը ծանր վիճակներուն հետեւանքով վնասներ կրած ընտանիքներուն օգնութեան ձեռք երկարելն է:

«Հայկական թաղամասերն ալ գերծ չեն այս ընդհանուր տագնապալի դրութիւնէն եւ վերջին օրերուն պատահած հրթիռարձակումներէն ետք կան վիրաւորներ, սակայն մահուան պարագաներ չեն արձանագրուած (նշենք, որ «Արեւելք» անկախ վաղ յայտնած էր

Սուրիոյ բանակի զինծառայող Փանոս Աղազարեանի մահուան մասին): Մեր համայնքի անդամներուն մօտ ալ կիսախուճապայի վիճակ մը կը տիրէ, սակայն բոլոր կը գիտակցինք, որ յառաջիկայ օրերը անկախ լաւ պիտի ըլլան մեր գաղութին համար»:

Ըստ Շահէ Մինասեանի, եթէ իրավիճակը դէպի կայունացում երթայ, ապա առաջին հերթին առժամաբար Սուրիոյ տարբեր շրջաններ հաստատուած հայկազայերը կրկին իրենց օճախը կը վերադառնան: Հնչակեան գործիչը նկատել տուաւ, որ իրենց համար ներկայ հանգրուանին ամէնէն առաջնային խնդիրը առողջական խնդիրներ ունեցող համայնքի զաւակներուն անհրաժեշտ օգնութիւն ցոյց տայն է, ինչպէս նաեւ հրթիռարձակումներուն հետեւանքով տուժած բնակարաններ ունեցող հայրենակիցներուն հարցերուն լուծումը: «Մեր փափաքն է, որ Հայկ պի հեռացած մեր բոլոր հարազատները վերադառնան ու այդ մէկը կրնայ իրականացուիլ միայն այս ծանր իրավիճակին աւարտէն ետք», - եզրափակեց Շահէ Մինասեան:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

# ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԵՂԱԾ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՓՈՐՁ ԶԵՌՆՈՒ ԷՐ ԹԱՅԵՊ ԷՐՏՈՂԱՆԻՆ

## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Թուրքիոյ պատմութեան օրագրութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւեն պետական հարուածները: Քէմալ Աթաթուրքի ճիգերով հանրապետութեան վերածուածերկրին մէջ կարեւոր դեր ունի բանակը, որուն բարձրախառն ղեկավարութիւնը շատ մը պարագաներու քաղաքական իրավիճակփոխելու կարեւոր լծակներու կը տիրապետէ:

Կրօնական հիմքերով հանդէս եկած եւ շուրջ 12 տարի առաջ իշխանութեան գլխու հասած ԱԿՔ («Արդարութիւն եւ զարգացում») կուսակցութեան հիմնական խնդիրը բանակին ունեցած առաւելութիւնները մեկուսացնելն էր: Ու հակառակ տարուած աշխատանքներուն էրտողան եւ իր լծակիցները տարբեր առիթներով իրենց ստանդարտները վրայ կը զգային քէմալական ուսման քով բանակի ղեկավար դիրքերը գրաւած սպաներուն «ծանրութիւն»ը:

Այդ մէկը սոսկական ծանրութիւն մը չէր միայն, այլ Քէմալիզմ-իսլամիզմ հակամարտութեան ուրուականն էր, որ ամէն առիթի կը ճնշէր սուլթանական խորթակներ ունեցող Ռէճէպ Թայէպ էրտողանը:

Այս բոլորէն անդին պէտք է նաեւ նկատի առնել, որ շրջանին մէջ տեղի ունեցող զարգացումներուն հետ Թուրքիան, որ կը փորձէր արագ շրջադարձ մը ընելով վերատին իր տեղը գրաւել, կրնար շատ մեծ շփոթ ապրիլ ներքին դաշտին մէջ եղած ցանկացած ցնցումով:

Մեծ մօրս հաւնոցէն քիչ մը աւելի մեծ, չէ, բաւական մը աւելի մեծ, հաւնոցի նմանող շէնք մըն էր Նիկոսիոյ օդակայանը: Ուզեցի ենթադրել որ մեզ, աշակերտներու «հին» օդակայանը իջեցուցած են: Իմացայ որ չէ, ա՛յս էր Նիկոսիոյ միակ օդակայանը ...

Պրն. Սեպուհ Աբգարեանը եկած էր մեզ դիմաւորելու: Երիտասարդ, շատ համակրելի, գեղադէմ, երիտասարդ եւ ազնիւ անձ մըն էր: Այդ տարիներուն Մելգոնեանի դիւանապետն էր ան: Անցադրերու եւ վախճանու հարցերը կարգադրելէն ետք, ելանք դուրս:

Պասի մը մէջ տեղաւորուեցանք եւ ճամբայ ելանք: Ես պատուհանին քով նստայ որպէսզի հելենուհիները տեսնեմ, եւ չես գիտէր, կրնար բարտա ժպտիլ: Ծամբան, կնքոտիներ հագուած, յոյն ծերուկ կիներ ճամբաները կ'աւելին: Հին տուններու առջեւ խեղճ ու կրակ կիներ, ծերունիներ նստած...

Կ'երեւայ Տրովաթալի պատերազմին բոլոր գեղեցիկ յոյն աղջիկները գերեւարուած էին...

Հեռուն երեւցաւ Մելգոնեանի ջրամբարը: Նախկին աշակերտները սկսան պոռչտալ՝ «Ջրամբարը, ջրամբարը» եւ ուրախութիւն, ծափահարութիւններ: Ենթադրեցի որ ճիշդ որոշում մը առեր եմ Մելգոնեան գալով:

Եւ մտանք Մելգոնեան: Աղա կարապետ եւ Աղա Գրիգոր Մելգոնեան եղբայրներու նորակերտ դամբանը, բարերարներու վեհանիստ կիսանդրիներով մեզ դիմաւորեցին: Ինչ վեհաշուք պատկեր: Ճերմակ մարմարով, քանդակներով եւ ուժի ցուցադրիչ

հիւսուածքներով բարձրացած, Մելգոնեան եղբայրներու կիսանդրիները խորհրդաւոր լրջութեամբ, բայց բարեացակամ ժպտով կը դիմաւորեն եւ բարիգալուստ կը մաղթեն քեզի: Ինչ պատիւ որեւէ հայ պատանիի համար, որ կ'արժանանար Մելգոնեանցի ըլլալու պատիւին, եւ հազիւ Մելգոնեան մտած, ազգին մեծագոյն բարերարներէն երկուքը զինք կը դիմաւորեն, սիրով եւ գուրգուրանքով: Մելգոնեան եղբայրները, կիսանդրիներու աչքերով, գաղտնի ժպտով մը կը դիտէին մեզ եւ կարծէք «բարի եկաք» կ'ըսէին: Բարութիւն մը կը հոսէր այդ կիսանդրիներէն: Ապահով կը զգաս որ երկու հսկաներ քու պաշտպաններդ են այլեւս: Վախնալու պէտք չունիս: Անոնք, իրենց անտեսանելի ձեռքերով կը զրկեն քեզ, հոգիդ կը ջերմացնեն եւ քեզ կ'առաջնորդեն դէպի աղբիւրը լոյսին: Եւ կարծես մէկ պատգամ, մէկ խնդրանք ունին քեզմէ՝ Մարդ եղիր եւ Ազգիդ վրէժը լուծէ Թուրքէն, լաւ հայ ըլլալով:

Մելգոնեան կրթական Հաստատութեան շրջապատը իր ճարտարապետական լուծումներով ազգային տաքուկ աւանդութեան շունչը կը փոխանցէր մեզի: Դպրոցին մուտքէն կը սկսի այդ խորհրդաւոր վեհութիւնը: Այդ եղաւ իմ առաջին տպաւորութիւնս երբ 1961-ին առաջին անգամ Մելգոնեան մտայ: Ապա, դամբանին երկու կողմերը, եռաշարի, փառաւոր զոյգ շէնքերը Մելգոնեանի, ձախին՝ աղջկանց, աղին՝ մանչերունը, իրենց յատուկ ճարտարապետական ոճով, գեղեցիկ, աստիճանաւոր եւ կիրաւորապէս թաճեւ մուտքով, կ'իշխեն շրջապատին վրայ: Ենթերու առջեւ բացուող պուրակները կարծես զիրենք ցանող որբերուն լեզուներով բարիգալուստ կը մաղթեն քեզի եւ կը յուշեն որ «Ազգիդ վրէժը լուծելու չմոռնաս...»:

Զոյգ շէնքերը Մելգոնեանի ... Պէջրութի մեր փոքր տուններէն ետք, վեհանիստ այդ շէնքերը, թառած Նիկոսիայէն դէպի հարաւարեւելք, Լիմասոլի ճամբուն Մարկաբլուրի գագաթին՝ պատկարանք կ'ազդէին նորեկներու վրայ: Կարծէք անոնք համբերութեամբ մեզ կը սպասէին: Ինչ փոթորիկներ զարնուէր ու անցէր էին անոնց պատերէն: Ինչ վաստակաւոր ուսուցիչներ իրենց շունչը, իրենց հոգին թողած էին հոն, հոն յաճախող հայ պարման-պարմանուհիներու հոգիները ազնուացնելու եւ միտքերը լուսաւորելու: Ինչ սէրեր փթթեր էին, ինչ բանաստեղծութիւններ գրուած ու այրած էին այդ

### ԶԲՕՍԱՅԳԻՆ ՄՐՏԱԲՈՒՄ ԲԵՍ



#### Ռ. ԿՈՐԻՒՆ

Զբօսայգում ծառերի թեւերի տակ՝ գով ու հաճելի, մի խումբ իրանահայ ընկերների հաւաք էր, օրը կիրակի Յուլիս 17, 2016 թ. նախապատրաստական աշխատանքի արդիւնք շնորհիւ Շահէն Մանանեանի, երիտասարդ ուժ, կազմակերպչական ձիրքերով: Վաղեմի ընկերներ՝ Պետրոս, Երեմ, Յովհաննէս, Շահէն, Սուրէն, Սուրիկ, Հայկ, Այդա եւ ուրիշներ անցեալով հարուստ իրենց միութենական ծառայութիւններով, ոմանք եկել էին կանանցով, ոմանք էլ առանձին, կային նոր երիտասարդ դէմքեր հաւաքին միացած: Ամերիկեան զբօսայգին հայկական շունչ էր ստացել՝ անկեղծ, սրտազին ու կարօտագին:

Դէհ որ երբ հայեր են հաւաքուում իրար շուրջ, պարզ է որ շարժառիթ եւ նպատակ կայ: Այս հաւաքը խորոված ուտելու ու հաճոյանալու հաւաք չէր, այլ նախկինի ասպնջական մի երկրի հայապահպանման փորձերից մղուելով ի գործադրութիւն նոր մի ասպնջական երկրում՝ խօսքի, մտքի, կենցաղի ազատ պայմաններում, հարուստ ու ծովածաւալ երկրում: Զբօսայգին դարձաւ բեմ, հայաշունչ բեմ, յստակ ու ոգեւորիչ հայերէնով խօսողների կողմից հայկական յուզող հարցեր առաջ քաշուեցին՝ Հայաստան, Արցախ եւ հայապահպանում:

Ներկայացուում է հակիրճ տողերով արծարծուած մտքերը՝

-Ամենայն նուիրուածութեամբ զօրավիզ կանգնել Հայաստանին եւ Արցախին, երկու թեւեր ազգի գոյատեւման երաշխիքներ:

-Թող մեր իշխանաւորները հաւասարակշռուած քաղաքականութիւն վարեն գերմեծերի ձգտումներից առաւելագոյն օգուտը քաղելու ի շահ մեր իրաւունքների ձեռք բերման՝ Արցախը պահելու ոչ մի կտոր հող զիջելով:

-Թող մեր իշխանաւորները հաւատարիմ մեր մշակութային արժէքներին քաղաքականութիւն վարեն անաղարտ պահելով հայ ազգա-

լին պատկերն ու հոգեմտածելակերպը իր մշակութային բոլոր բնագաւառներում:

-Սփիւռքահայութեան կենտրոնական ընհանուր մէկ մարմին կեանքի կոչել քաղաքագէտ ու մտաւորական անդամներով, եթէ կայ այդ մարմինը, թող ի լուր գաղթօջախներին տեղեկացուի, այս մարմնի գոյութիւնը անհրաժեշտութիւն է միշտ եւ շարունակ:

-Հայապահպանումը աշխատանք է պահանջում ընտանիքներից սկսելով, աշխարհական ու կրօնական ղեկավարներից առաւել սպասելիքներ է պահանջում:

-Եթէ նախանձախնդիր չլինենք մեր լեզուին ու լեզուամտածողութեան ձուլման վտանգը կուլ կը տայ բոլորիս, ինչպէս գետը ծով մտնելիս:

-Թող միութիւնները առաւել աշխուժ ներգրաւեն շատ թուով մանկահասակ պատանիներ նիւթականի բեռով չծանրաբեռնելով ծնողները, ստեղծել եկամտաւոր աղբիւրներ եւ օգտուել պետական յատկացումներից:

-Հանդիպումները յաճախակի կազմակերպել բազմամարդ ներկայութեամբ ազգային-հայրենասիրական եւ հայապահպանման յուզող հարցեր քննարկելով:

Բացի այն որ ազգային-հասարակական հարցերով խօսողների ունկնդրութիւն եղաւ, նաեւ կատարուեց գեղարուեստական յաջող ծրագիր: Հայկ խաչաւեանը ներկաներին ոգեւորեց Գեորգ Էմիլիի՝ «Սասունցիների պարը» ասմունքով, Ռ. Կորիւնը իր նոր հրատարակած՝ «Մարդու առաքինութեան ճառագումը» գրքից երկու ընթերցում կատարեց՝ «Մէկ ըրպէ լուրթիւն եւ հարիւր զանգերի դօղանջ» պոէմա նուիրուած ցեղասպանութեան հարիւրամեակին, միւս ընթերցումը հասարակական կեանքին առնչուող՝ «Զուգեցի կուլ գնալ բարբարոսներին»:

Հիւրապիւրութեան աւարտին ընկերները մի քաղցր ու անմոռանալի յուշով յաւելեալ անցեալի մեկնեցին շուտով հանդիպելու ցանկութեամբ:

զոյգ շէնքերուն մէջ:

Եւ հիմա, կարգը մերն էր: Մեր սերունդն ալ պէտք էր առնէր, պէտք էր ըմպէր այդ լոյսէն, եւ ապա, օր մը, տեղ մը, լոյս տար իր շրջապատին:

Մելգոնեանի շէնքերը եռաշարի էին: Մանչերու շէնքին գետնայարկը (կամ առաջին շարկը) բաղկացած էր ճաշարանէն, «ակումբ»էն, վալիգանոցէն, երաժշտանոցէն, սափրիչատունէն, եւ գիտաշխատանոցներէն: Երկրորդ շարկին վրայ կային Տնօրէնին գրա-

սենակը, դիւանը, ուսուցչարանը, հերթապահին գրասենեակը, վարժապետանոցը, օժանդակ դիւանատունը, գանգակատունը եւ դասարանները: Երրորդ շարկին վրայ էին ընդարձակ սերտարանը եւ ննջարանը իր յարակից սենեակներով: Աղջկանց շէնքին մէջ էին գլխաւորաբար գրադարանը, յիւթիւճեան Թանգարանը, երգչախումբին սենեակը, դասարաններ, եւ հանդիսասրահ:

### ՎԱՐԴԱՆԸ

(ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՍԵԹԵԱՆ ՄԱՅՈՒՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ)

Աշուն չեկած՝ տերեւաթափ...  
Վերջին անգամ գրուցեցի հե-  
տը Երեւանի մէջ... յուսալքուած  
էր... Հալէպի մէջ ծանր վիրահա-  
տութեան ենթարկուած ըլլալով,  
չարափաստիկ ախտը՝ դարձեալ ինք-  
զինք զգացնելու սկսած էր վեր-  
ջերս: Երբ գինք յուսադրելու փորձ  
ըրի, յայտնեց, որ պիտի վերադառ-  
նայ Հալէպ՝ խորհրդակցելու հա-  
մար գինք վիրահատող բժիշկին  
հետ...



Իմ դիտողութիւնս, Հալէպի  
անապահովութեան մասին... պա-  
տասխանը եղաւ. «որքան ալ վտան-  
գաւոր ըլլայ, այդ իրավիճակին  
յարմարեցանք... յետոյ, բժիշկս ալ  
հոն է, տեսնեմ ինչ կ'ըսէ»:

Այդ երթալն էր...  
Հալէպէն լուրերը ալ աւելի  
տագնապալի ու ողբերգական սկսան  
դառնալու: Ու ահա գանգ՝ մտերի-  
մէ մը, որ կը գուժեր մահը՝  
Վարդան Մելիքսեթեանի...

Որքան ալ պատրաստ ըլլաս  
բախուելու իրականութեան հետ,  
հարագատի կամ ընկերոջ կորուս-  
տին հետ չես կրնար հաշտուիլ,  
յատկապէս երբ հեռու ես ու պատ-  
րանքն ալ իրականութիւնը քողա-  
ծածկելու կը ճգնի յամառօրէն:  
Սակայն, օրերու թաւալումը, ինքնա-  
տինքեան պարզելով տխուր եղե-  
լութիւնը՝ կը յուշէ, որ արդէն  
քառասուն օր է ողբացեալը՝ հատեր  
է երկնայինի սահմանն ու միացեր  
հազար տարուայ անդենականի բնա-  
կիչներուն...

Եթէ Աստուած վերը նստած,  
իւրաքանչիւր քովը գացողին երկ-  
րային գործերը կը դատէ, ապա  
որպէս մտերիմի, մենք ալ ունինք  
բարոյական պարտաւորութիւն  
ի մի բերելու անոր կեանքին  
իմաստաւորուած հատուածներն ու  
արդար գնահատական մը տալ: Սա  
պէտք է ըլլայ (իմ համոզմամբ)  
իւրաքանչիւր «պարողին» պարտա-  
կանութիւնը, որ «է» նաեւ ինքնա-  
դատումն ու վերաբեւոյնումը, «իւ-  
րաքանչիւրիս» կենդանութեան օրե-  
րը: Հիմա, պիտի ըսէք թէ «ինչու է  
այս խորհրդածութիւնը՝ քառասուն-  
քի մը առթիւ... Ի՞նչ որ յաւուր  
պատշաճի, ընդունուած ձեւով կարե-  
լի է վեր առնել ողբացեալին մատու-  
ցած ծառայութիւնները»...

Անշուշտ թէ համաձայն ըլլա-  
լով սոյն դիտողութեան, կ'ուզեմ  
բան մը յիշեցնել... Թաղմանական  
թափօրին, իւրաքանչիւր մասնա-  
կից սզակիրէն, ո՞ր մէկը չի խորհր-  
դածեր «կեանքի ու մահուան»  
մասին -անկախ տարիքէն ու գի-  
տակցական մակարդակէն- վստահ  
եմ, եթէ ոչ ողջ երթի ընթացքին  
ապա գոնէ պահ մը, անպայման կը  
մտորէ ծնունդ-մահ առեղծուածին  
մասին: Ահա եւ մտերիմի մը կո-  
րուստը ողբալով հանդերձ, պար-  
տաւոր ենք գնահատական մը տա-  
լու յետ մահու, իր հասարակական  
ու միութեանական գործերուն բե-  
րած նպաստին համար, որովհետեւ  
կը գիտակցինք թէ սփիւռքի տա-  
րածականութեան վրայ իւրաքան-  
չիւր նուիրեալին քրտինքով կը  
գոյատեւենք՝ որպէս Հայ...

Ահա եւ Վարդանը, որդի Ար-  
թիւի ու Մարիի, մայրենիի բառ ու  
բանը թոթովելով կիլիկեան հայա-  
բոյր դպրոցին մէջ, անոր ճեմարա-  
նի բաժինը աւարտելով՝ բարձրա-

գոյն մասնագիտական ուսումը շա-  
րունակեց՝ Հալէպի համալսարանի  
մէջ, ուրկէ վկայուելով որպէս «երկ-  
րաչափ-շինարար»: Այնուհետեւ,  
ապագան կառուցելու մտահոգու-  
թիւնը գինք մղեց արտագնայ աշ-  
խատանքի, որ տեւեց տասնամեակ  
մը: Ամուսնացաւ օր. Մանիա Մնուն-  
ուի հետ ու բախտաւորուեցան  
երկուորեակ մանչերով՝ Յարութ եւ  
Ժանօ: Վերադարձ Հալէպ, ուր հիմ-  
նեց սեփական գրասենեակը:

Ան, դպրոցէն մինչեւ համլսա-  
րանի աւարտը, անցնելով Հ.Մ.Մ.-ի  
սկառուական շարքերէն, հասաւ մին-  
չեւ իմբապետի աստիճանին, որուն  
ծառայեց խանդավառութեամբ ու  
նուիրումով: Այնուհետեւ, Նոր Սե-  
րունդ Մշակութային Միութեան  
Վարչական, Կիլիկեան կրթական  
հաստատութեան հաշուէքննիչ  
մարմնի ղեկավար, Ս.Դ.Հ.Կ. վարիչ  
մարմնի անդամ: Վարդան, նշեալ  
պաշտօնները կատարեց բժախնդիր  
կարգապահութեամբ: Իր բժախնդ-  
րութիւնը երբեմն այնքան կատա-  
րելութեան կ'ուզէր հասցնել, որ կը  
յարուցեր «քչիկ մը անփոյթնե-  
րու» դժգոհութիւնը: Ատիկա  
բնաւորութիւն մը ըլլալով հան-  
դերձ, հաւանաբար սկառուականն  
ալ նպաստած ըլլալու էր անոր  
զարգացման...

Անշուշտ, երբ նման բնաւո-  
րութեամբ մէկը կ'ընտրու հարցերու  
դէմ յանդիման կուգար, անպայման  
նեղացկոտութիւնը գլուխ պիտի  
ցցեր...

Սակայն Վարդանի պարագա-  
լին՝ այդ երեւոյթը կը լուծուեր  
երկու անուշ խօսքով՝ անպայման  
համադամ սեղանի շուրջ: Իր նուիր-  
ուածութիւնը կիլիկեան մեծ ըն-  
տանիքին՝ գիտակցական էր, որով-  
հետեւ կը հասկնար, որ իր երդումը  
նուիրումի, ոչ թէ լոկ պահի ու  
խանդավառութեան արդիւնք էր,  
այլ ծառայութեան, զորս պէտք էր  
կատարեր ամբողջական ու անսա-  
կարկ: Այդպէս ալ մնաց մինչեւ  
վերջ: Իր անձնական կեանքին մէջ  
ալ եղաւ հոգածու որդի, ուշադիր  
ամուսին եւ գուրգուրացող հայր...  
եւ երբ Հալէպի տագնապը սրեցաւ,  
ամէն ճիգ թափեց, որ գոնէ զաւակ-  
ները ապրին ապահով՝ Հայրենիքի  
մէջ: Տակաւին շատ ծրագրերն  
ուներ, որոնք մնացին անկատար...  
Իսկապէս ալ, տերեւաթափ՝ աշուն  
չեկած... Յիշատակը անթառամ՝  
սիրելի ընկեր:

Կ. Լեփեճեան

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏԱՖՅՈՐ ԿԱՐԱՊԱՆԵԱՆԻ

Քրիստաֆօր Կարապանեանը  
ծնուել է Փետրուար 11, 1927-ին  
Կասպից ծովում, ընտանեկան ճամ-  
բորդութեան ընթացքին Ռուսաս-  
տանի եւ Պարսկաստանի միջեւ:  
Այդ պատճառով է լինում որ նաևի  
կապիտանը անուանում է նրան  
«Քրիստաֆօր»:



Քրիստաֆօրը Պօղոս Կարա-  
պանեանի եւ Սիրաֆիմա Եակօվլէ-  
ւայի չորրորդ երեխան է լինում:  
Նա ունէր երեք քոյր՝ Վարթի-  
թեր «Րոզա», Եւգինէ «Ժէնիկ»,  
Օլգա, եւ մէկ հաս մեծ եղբայր  
Գուրգէն:

Իր մանկութեան եւ պատանե-  
կան տարիները անցկացրել է Կաս-  
պից ծովի »Անգալի« նաւահան-  
գիստում: Նա սիրում էր բնու-  
թիւնը եւ գերազանց լողորդ էր:

Քրիստաֆօրը աշխատասէր  
անձ է եղել: Տասնըչորս տարե-  
կանից նա սովորել է ինքնա-  
շարժ վարել եւ սկսել է գործել  
իբրեւ ռազմային բեռնակառք  
վարող:

Պատանի տարիքում Քրիս-  
տաֆօրը խօսում էր բազմաթիւ  
լեզուներ, նա ունէր հետաքրքրա-  
սէր միտք, եւ շատ էր սիրում  
էլեկտրական ապրանքներ սարքել:

Տարիներ անցան, Քրիստա-  
ֆօրը ընդանիք կազմեց եւ սկսեց  
աշխատել էլեկտրական նորոգման  
գործերով: Ստացաւ մեծ գնահա-  
տանք Պարսկաստանի թագուհուց  
իր գործի համար:

Նա նաեւ սիրում էր արուեստը  
եւ արհեստ: Իր երիտասարդու-  
թեան ընթացքում, կառուցել էր մի  
մեծ, գեղեցիկ, փայտէ «Eiffel»  
աշտարակ, որը գարդարուած էր  
զանազան փայլուն լոյսերով:

Քրիստաֆօրը շատ մեծ սէր  
ուներ էլեկտրական եւ այգեբանա-  
կան գործերով, այդ պատճառ  
դարձաւ որ շատ ընկերներ շահէր  
ուր որ երթար:

Այս սէրը չի կորցրել - հե-  
տաքրքրասէր ու աշխատասէր մնաց:  
Իր մեծահասակ տարիքին նոյնիսկ,  
իր բոլոր հարեւանների ապրանք-  
ներն էր սարքում առանց դրամա-  
կան վարձատրութեան, ուրախաց-  
նելով անոնց:

Մինչեւ այսօր, շատերը դեռ  
պատմում են իրենց լաւ ժամանց-  
ների մասին իբրեւ Քրիստաֆօրի  
հիւրերը իր ընդարձակ այգիում եւ  
լողաւազանում:

Իր ջերմութիւնը չափ ու սահ-  
ման չունէր: Իրաքի եւ Իրանի  
պատերազմի ժամանակ, որպէսզի  
ժողովուրդը ապահով մնային ռում-  
բերից, նա ընդունում էր հարիւ-  
րաւոր ընտանիքներ իր այգիում:  
Քրիստաֆօրը ապրեց լիար-

ժէք կեանք եւ նուիրեց իր ընդհա-  
նուր սիրտը եւ ոգին իր շրջակայ-  
քին: Շատ հպարտ էր իր ծնողներով  
եւ պարծանքով պատմում էր նրանց  
մասին: Մեծ եղեռնի ընթացքին,  
իր հայրը եղել է ազատամարտիկ եւ  
հարիւրապետ Անդրանիկ գործա-  
րի ջոկատին, Վան քաղաքի մէջ  
Օսմանեան կայսրութեան դէմ կռուե-  
լով: Մայրը եղել է դերձակ Յար  
Նիկոլայի պալատում:

Քրիստաֆօրի միակ ցանկու-  
թիւնն էր որ իր զաւակներ երջա-  
նիկ ապրէին իրենց ընտանիքի  
հետ: Շատ ուրախութիւն էր իրեն  
տեսնել որ բոլորը իրար հետ լաւ  
յարաբերութիւն ունէին:

Յուլիս 12, ժամը 3:15-ին  
Քրիստաֆօրի սիրտը կանգ առաւ  
եւ շնչեց իր վերջի շունչը իրեն  
հաւատարիմ աղջկայ ժասմէնի եւ  
փոքր քոյրիկ Օլգաի ներկայու-  
թեան:

Մեր սիրելի հայրը եւ մեծ  
հայրը հասել է յաւիտենութեան եւ  
թողել է մեզ համար լաւ յուշեր որ  
պիտի մնան մեր սրտերի եւ մտքե-  
րի մէջ:

Քրիստաֆօրի սզակիրներն են  
իր 8 զաւակները - Ժողէֆ, Ժասմէն,  
Քարմէն, Շահէն, Շաքէ, Արմինէ,  
Վաղիմ եւ Պետիկ, 16 թոռնիկներ եւ  
2 ծոռնիկներ: Սրտի ծանր կսկիծով  
իր երրորդ զաւակը՝ Վարուժը  
մահացաւ 6 ամսականում:

Քրիստաֆօրի կատակասէր տի-  
պարը, մեծահոգի անձնաւորութիւն  
ըլլալը, արդարութիւնը, եռանդը,  
աշխատասիրութիւնը եւ ջերմ վե-  
րաբերումները պիտի ժառանգուի  
եւ փոխանցուի սերունդից սե-  
րունդ:

Քրիստաֆօրի յիշատակը վառ  
պիտի մնայ մեր սրտերուն մէջ:  
Սիրելի Քրիստաֆօր, Աստ-  
ուած հոգիդ լուսաւորի:  
Ամէն:

OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA  
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506



### ԻՆՉ ԸՆԵԼ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԵՉ ՅԱՅՏՆՈՒԵԼՈՒ ՊԱՅՈՒՆ

Մեծ իմաստութիւն եւ կեանքի փորձ ունեցող Գաբրիէլ Կարսիա Մարգեհի 15 ոսկէ խորհուրդները, որոնք կ'օգնեն դժուար իրավիճակներու մէջ յայտնուելու պահուն:

1. Պէտք է հետեւիլ երեխայի ձայնին, որ եղած է ու կայ մարդու հոգիին մէջ: Եթէ մենք կը լսենք մեր մէջ առկայ մանուկին, մեր աչքերը կրկին կը փայլին: Եթէ մենք չենք իզգայնացուցած, ուրեմն չենք ալ կորսնցնել կեանքի հետ ունեցած մեր կապը:
2. Հանգստացիր: Մեռնիլը աւելի դժուար է, քան կը թուի:
3. Կեանքը շարունակելու միակ միջոցը՝ թոյլ չտալ յիշողութիւններուն կրծել ու ոչնչացնել քեզ:
4. Հասարակական կեանքի գլխաւոր սկզբունքը՝ կարենալ կառավարել վախը, իսկ ամուսիններու կեանքին մէջ կարելորդ է կարենալ վերահսկել ձանձրոյթը:
5. Կեանքի նշանակութիւնը չունի, որ դուն չես հաւատարմութիւն քեզի: Կարեւորը, որ Աստուած կը հաւատայ քեզի:
6. Ես գլխարկ չեմ դնել,

որպէսզի ոչ մէկուն առջեւ հանեմ գայն:

7. Ոչ մէկ խենթ խելագար է, եթէ լսես անոր փաստարկները:
8. Եթէ որեւէ գործի մէջ ներգրաւուած է կին մը, վատահամ, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Յստակ է, որ կիներ կը կառավարեն աշխարհը:
9. Մեծ աղէտները մեծ առատութիւն կը բերեն: Անոնք կը ստիպեն մարդոց սպրեւելու ցանկութիւն ունենալ:
10. Երբեք շատ ուշ չէ:
11. Աւելի լաւ է ուշ գալ, քան հրաւիրատուներու սպասել:
12. Հաշտեցման վայրկեանը աւելի կ'արժէ, քան մտերիմ ընկերութիւնը:
13. Եթէ հանդիպիք ձեր իսկական սիրոյն, գիտցէք, որ ան ոչ մէկ տեղ կը փախչի՝ ոչ մէկ շաբաթ, ոչ մէկ ամիս, ոչ ալ մէկ տարի ետք:
14. Թոյլ մի տար քեզ մահանալ՝ առանց զգալու սիրելիիդ կողքին քնանալու հրաշքը:
15. Ժպտացէք, որ վիշտին հաճոյք չպարգեւէք:

### ՈՒՇ ՄԱՅՐԱՆԱԼՈՒ 5 ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Դուք յաջողակ կին էք, որ կեանքի մէջ հասած էք շատ բանի: Ձեր կարծիքը հաշուի կ'առնեն բոլորը, ձեզ կը յարգեն գործընկերները եւ ընկերները: Արդէն 30 տարեկանին դուք կրցած էք ստեղծել նիւթական ապահովութիւն: Իսկ ինչ է հաւանականութիւնը լոյս աշխարհ բերելու առողջ երեխայ 30-էն ետք: Ինչպիսի՞ վտանգներ կը վերցնէ իր վրայ կինը: Հակառակ անոր, որ հասարակութիւնը վերջին տասնամեակներուն աւելի հանգիստ կը վերաբերի ուշ ծննդաբերութեան, մինչեւ այժմ ատոր համար լաւագոյն տարիքը կը համարուի 20-30-ը:

Հնարաւոր վտանգները եւ բարդութիւնները կը վախցնեն կիները, որոնք կը ծրագրեն ուշ յղութիւն, սակայն կան նաեւ շարք մը դրական կողմեր:

1. Զգացմունքային եւ հոգեբանական պատրաստուածութիւն: 30-էն ետք, մեծ մասամբ մարդիկ կարելի է անուանել հասուն, կազմուած անձնաւորութիւններ: Դուք կրնաք կարգաւորել ձեր զգացումները, գիտէք ինչ է դժուարութիւնը եւ կրնաք զայն յոյժաւորաբար հարել: Գիտակցուած մայրութիւնը հսկայ առաւելութիւն կու տայ ե՛ւ մայրիկին, ե՛ւ ապագայ

երեխային:  
2. Նիւթական կայունութիւն: Շատ յաճախ 30-ի մօտ գոյգերը արդէն ունին կայուն աշխատանք եւ կացարան, այդ պատճառով ապագայ ծնողները կարիք չեն ունենար շեղելու նիւթական խնդիրներու վրայ եւ ամբողջութեամբ կը կեդրոնանան ընտանիքի նոր անդամի յայտնուելուն վրայ:

3. Օգուտ առողջութեան համար: Էստրոգենները, որոնք յղութեան ժամանակ կ'աշխուստանան, կ'ամրացնեն ոսկորները եւ կը նուազեցնեն հիպերտոնիայի վտանգը, կը բարելաւուի կնոջ արտաքին տեսքը, կը մեծնայ սեռական աշխուժութիւնը:

4. Երկրորդ շնչառութիւն: Ուշ յղութիւնը եւ երեխային յայտնուելը կնոջ կը պարգեւեն երկրորդ երիտասարդութիւն, նոր շրջապատ:

5. Պատասխանատուութիւն. Ուշ յղութիւնը ցանկալի, գիտակցուած եւ երբեմն երկար սպասուած քայլ է: Ապագայ մայրիկները աւելի լուրջ կը վերաբերին յղութեան: Նաեւ, այս տարիքին կիներ կ'ունենան կայուն յարաբերութիւններ եւ անոնց կողքի տղամարդը կեանքի այս շրջանին նոյն պատասխանատուութեամբ կը մօտենայ եւ կը կիսէ բոլոր դժուարութիւններն ու լաւ պահերը:

### ԴՐԱԺԱՐԵՑԷ ԶԵՉ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՏԱՆՈՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր սովորութիւնները կ'ազդեն ֆիզիքական եւ զգացմունքային վիճակին վրայ եւ, փաստօրէն, կը ծրագրաւորեն մեր վարուելակերպը ու կը նախանշեն կեանքը: Անոնց մէջ կան այնպիսիները, որոնցմէ կ'արժէ հրաժարիլ:

1. Դուք ձեզ խղճալու սովորութիւն: Աղքատութիւնը կը սկսի երբ դուք ձեզի անընդհատ կը խղճաք եւ կու լաք՝ անյաջող դասաւորուած բարտի համար: Կազմուածքը լաւ չէ, եկամուտը քիչ է, բնակարանը լաւ չէ... Ամէն ինչ կրնայ առիթ ըլլալ բողոքելու համար: Ատոր հետ մէկտեղ մարդիկ, որոնք մշտապէս կը խղճան իրենք իրենց, կը սկսին կորսնցնել շրջապատին կարեկցութիւնը: Այսպիսի մարդուն կարելի է անսպառ խղճալ, սակայն ան ինքն ալ պէտք է բան մը ընէ: Այսպիսի մարդոցմէ կը խոստատիւն, ոչինչ կը սպասեն անկէ եւ այլեւս չեն կանչեր հանդիպումներու, իբրեւ արդիւնք՝ ան կ'ունենայ քիչ կապեր, առանց որոնց դժուար է աշխատանք գտնել: Խղճալը կը տանի ցած վարձատրուող աշխատանքի եւ միջակ գոյատեւման:

2. Ամէն բանի համար խնայել: Եթէ խանութին մէջ դուք կը փնտռէք գեղջերով բաժինը, եթէ կը կարծէք, որ ձեր գործընկերները ձեզմէ շատ կը վարձատրեն, եթէ ոչ մէկուն պարտքով գումար կու տաք եւ կը կարծէք, որ ձեր աշխատավարձով երեխայ չեն ունենար, ամենայն հաւանականութեամբ, աղքատութեան սովորութիւնները արդէն ձեր մէջ են:

Վերլուծաբաններուն համաձայն՝ լայնածաւալ խնայողութիւնը

խելամտութիւն չէ, ատիկա կը նշանակէ, որ մարդը չունի եկամուտներու եւ ծախսերու հաշուեկշիռ: Ունեւոր մարդը պատրաստ է իրերու համար վճարել անոնց իրական գումարը, բացի այդ՝ ան պատրաստ է վճարել ուրիշի աշխատանքին համար եւ նոյնը կ'ակնկալէ ուրիշներէն:

3. Ամէն ինչ դրամով գնահատել: Աղքատութեան ծրագրուածները կը կարծեն, որ միայն շատ դրամ ունենալով կարելի է երջանիկ ըլլալ, որ կեանքով ուրախանալ չըլլար, եթէ չկայ արժէքաւոր հագուստ, մեծ տուն, գեղեցիկ ինքնաշարժ: Ընկերաբաններու կարծիքով՝ «Ձեզի ի՞նչ պէտք է երջանկութեան համար» հարցին պատասխանելով՝ աղքատները կը սկսին նիւթական իրեր թուարկել, մեծ եկամուտով մարդիկ կ'ըսեն՝ սէր եւ ընկերութիւն:

4. Խուճապ, երբ կը վերջանայ դրամը: Երբ կը կասկածիք, որ ձեզ կրնան աշխատանքէ հեռացնել, իսկ եթէ այդ միտքը արդէն կ'արագացնէ ձեր զարկերակին աշխատանքը, կը նշանակէ, որ դուք ծրագրաւորուած էք աղքատութեան: Հարուստ մարդոց համար դրամը անվերջ չէ, բայց անոնք գիտեն, որ օր մը կրնան ունենալ, իսկ օր մը՝ ոչ:

5. Ծախսել աւելին, քան կը շահիք: Դուք կ'աշխատիք երկու տեղ, սակայն գումարը չի բաւեր: Ժամանակն է բան մը փոխելու: Եթէ մարդը չի հասկնար, թէ մէկ վարկը ինչով կը տարբերի միւսէն, ուստի ան, ի հարկէ, հարուստ չի դառնար:

6. Զսիրած գործով զբաղելու

### ՄԻՐԳԵՐՈՒ ԵՒ ԲԱՆՁԱՐԵՂԵՆՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՍՈՐԹԻՆ ՎՐԱՅ

Դիմակները արագ ազդող դիմաչարդարման միջոցներ են, որոնք կը սնուցանեն, կը մաքրեն եւ կը նրբացնեն մորթը: Ճիշդ պատրաստուած եւ կիրարկուած դիմակները կը բարելաւեն սնուցումը եւ արեան շրջանառութիւնը, կը կարգաւորեն հիւսկէններուն մէջ ճարպային, սպիտակուցային, ածխաջուրներու եւ հանքանիւթերու փոխանակութիւնը:

Դիմակներու ազդեցութիւնը ի յայտ կու գայ մէկ անգամէն, որ հակայն է, օրինակ, երբ ձեր տեսքը պէտք է շտապ կարգի բերել: Կանխարգիլման նպատակով դիմակները յարմար է օգտագործել շաբաթը երկու անգամ:

- Առաւել տարածուած են միրգերէ եւ բանջարեղէններէ դիմակները: Այս հրաշալի միջոցներու սիրահարներուն համար օգտակար է գիտնալ, թէ որ բնական միջոցը, ինչ դրական ազդեցութիւն ունի:
- Միրանը կը հանգստացնէ եւ կը վերացնէ զրգուածութիւնը,
- Սմբուկն ու դոլմը կը խոնավացնեն չոր եւ բորբոքած մորթը,
- Պանանը մորթը կը խոնավաց-

նէ, կը հարթեցնէ եւ կը փափուկցնէ, -Լոռամիրգը եւ հապալապը կը նեղցնեն ծակտիկները եւ բուժիչ ազդեցութիւն ունին,

-Խաղողը կը խոնավացնէ, կը սնուցանէ եւ կը փափուկցնէ,

-Պալը կ'առօգտացնէ եւ կը նեղցնէ ծակտիկները,

-Գետնախնձորը կազդուրիչ ազդեցութիւն ունի կնճռոտ մորթին վրայ,

-Ելակը եւ ագնուամորին կը խոնավացնեն եւ կ'ապաքինեն,

-Կիտրոնը, թուրինջը, նարինջը եւ մանտարինը հրաշալի կերպով կը նեղցնեն ծակտիկները, սակայն ասոնց հիւթերը պէտք է խոնակել այլ հիւթերով՝ առաջիններու չափէն աւելի ներգործութիւնը մեղմելու համար,

-Վարունգը ունի սպիտակցանող ազդեցութիւն,

-Դեղձը կը հարթեցնէ եւ կը փափուկցնէ,

-Լոլիկը կը սնուցանէ յոգնած մորթը,

-Խնձորը հրաշալի կերպով կը խոնավացնէ:

Պատրաստեց՝ ՆԱԲԻՆԷ Ն.

**ՆՈՐ ԳԻՐԸ**  
**«Մութ ու լոյս»**  
 Միքայէլ Յ. Եուսուֆեան

Շնորհակալութեամբ ստացանք Միքայէլ Յ. Եուսուֆեանի՝ «Մութ ու լոյս» գիրքը բովանդակութեամբ բանաստեղծութիւններ եւ արձակ էջեր: Գիրքը ձօնած է իր կեանքի ընկերոջ՝ Արփիին: Գիրքը ներշնչանք է կրօնական պատգամներէ եւ բարոյական արժէքներէ 198 էջերէ բաղկացած 2016-ի տպագրութիւն: Կը շնորհաւորենք հեղինակին եւ կը մաղթենք քաջառողջութիւն նոր գրքի ակնկալիքով:

Բանաստեղծութիւն  
 արձակ

**Մութ ու լոյս**

Միքայէլ Յ. Եուսուֆեան

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԵՉ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Շատ զօրաւոր անհատականութիւն մը ունիս, որ ճնշումներու տակ գիտես տոկալ եւ յարատեւել քաջօրէն: Տարօրինակ զուգադիպումով մը պիտի հանդիպիս վաղեմի բարեկամի մը եւ հիմ օրերը յիշելով՝ լաւ ժամանակ պիտի անցընես:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,25,26,33

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**  
 Վերջին արարքներովդ քաջալերական երեւոյթ մը պիտի ստեղծես շուրջիցներուդ եւ շատեր օրինակիդ հետեւելով յաջողութիւն պիտի գտնեն իրենց գործի ասպարէզին մէջ: Երբ ինքզինքդ տկար զգաս՝ կռքնիր եղբորդ բազուկներուն վրայ:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,9,11,22,26

**ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 21**  
 Մտքիդ մէջ կասկած մը քեզ կը հիւծէ եւ կը թշուառացնէ: Ճակատագրական քայլերու մի դիմեր, ժամանակը պիտի լուծէ հարցերդ: Ծայրահեղ մարզանքներու կ'ուզես հետեւիլ առողջութիւնդ բարելաւելու համար: Մի երկմտիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,18,27,30,35

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 22-Յուլիս 22**  
 Խորհուրդներդ քեզ վատ տեղեր չտանին, փորձէ քաղցրացնել զանոնք լաւատեսութեամբ: Շուտով եզրակացութիւններու հանգելով՝ սխալ որոշումներ պիտի առնես: Առողջութիւնդ առաջնակարգ տեղ թող գրաւէ կեանքիդ մէջ:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,15,23,31,34

**ԱՌԻԻԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Միջավայրիդ շատ շուտով կը վարժուիս՝ դիւրացնելով յարաբերութիւններդ գործատեղիիդ մէջ: Եթէ կրնաս օրդ առանց տրտունջի անցընել՝ արդէն յաջողած կ'ըլլաս կեանքի դժուարագոյն պատուհասներուն:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,17,25,27,33

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Կեանքը որքան որ ալ կարճ թուի ըլլալ, երբէք չմտահոգեր քեզ, այլ կը փորձես լաւագոյնդ կատարել անուշցնելու այդ ժամանակը: Սիրայից կեանքդ շատ յաջող է, փոքր վերիվայրումներով: Նոր գործի առաջարկ մը պիտի ստանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 10,16,20,28,34

**ԿՇԻՈՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**  
 Ուրիշներու նկատմամբ անկեղծ եւ բարի ես, սակայն դուն քեզ կը խաբես: Պարագաներդ թոյլ չեն տար որ երկար ճամբորդութիւններ կատարես: Բարձրաստիճան պաշտօններու պիտի արժանանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,13,26,30,31

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Երբէք մի փորձեր կասկածիլ կարողութիւններուդ վրայ, ինքնավստահ եղիր: Կողակիցիդ հանդէպ ունեցած զգացումներդ փորձէ արտայայտել լաւագոյն եւ անուշ ձեւերով: Թռչիք մը ըմբացքի՞ն՝ քիչ մը նեղութեան պիտի հանդիպիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,18,24,28,32

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Գէշ սովորութիւններդ հրաժարէ, կամքդ պարտադրելով: Անծանօթ մը քու վրայ մտահոգութիւնը պիտի յայտնէ: Իրմով հետաքրքրուած չ'ըլլալդ, փորձէ անուշութեամբ յայտնել այդ ենթակային: Նուէր մը պիտի ստանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,19,28,31,32

**ԱՅԾԵՂՋԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Օտարներու հետ ազնիւ վերաբերմունք ունեցիր եւ շարժումներդ ցոյց թող տան լաւ արժէքներով լեցուն սիրտդ: Չսիրած բաներդ մի փորձեր, այն համոզումով որ աւելի պիտի ընդունուիս շրջանակիդ կողմէ: Ինքնավստահ եղիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 15,24,28,31,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Օրինակելի կեցուածք մը ունիս շուրջդ գտնուող մարդոց մէջ: Ի գուր տեղը մի մտահոգուիր առողջութեանդ վրայ երբ տակաւին առողջ ես: Հիւրասիրութիւնը շատ սիրելուդ՝ յաճախ հաւաքներ կը կազմակերպես տանդ մէջ:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,8,22,23,34

**ՉՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Քու կարծիքդ շատ կենսական է զաւակներուդ համար, օգնելու անոնց գտնելու իրենց շնորհքները: Կործանիչ քննադատութիւններէ հեռու մնացիր եւ փորձէ պարկեշտօրէն ճշմարտութիւնները ըսել սիրելիիդ: Վտանգաւոր խաղերէ հեռու մնացիր:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,12,26,34,35

### «ԲԱՐՈՅԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ»

**Շարունակուած էջ 14-էն**

էր զանոնք: Բայց ո՞ւր եւ ինչպէ՞ս են հայոց տապանաբարերը, ե՞րբ է, որ մեր նահատակները պիտի հանգչին: Հապա մե՞նք՝ վերապրողներ՞ու, արդեօք պիտի կարենա՞նք հանգչիլ:

Գեղեցիկ է Պերլին քաղաքը: Կը վայելեմ այս քաղաքին գեղեցկութիւնը՝ անոր ընդմէջէն տեսնելով Պունտեսթակի պատմական որոշումին գեղեցկութիւնը:

Սակայն երեւի ներաշխարհիս մէջ պէտք էր կամըջէի եւ անոր հետ հաշտեցնէի նախագահին «բարոյական յեղափոխութիւն»-ը եւ նահանգապետին «աշխարհը վերաշինելու» մարտահրաւէր-առաքելութիւնը: «Բարոյական յեղափոխութեան» յառաջացումը կ'ենթադրէ ունենալ որոշ հիմքեր, այդ հիմքերուն տուն տուող արժէքներ, որոնք իրենց կարգին կ'ենթադրեն անցեալի անդրադարձ եւ արժեւորում, ինչպէս նաեւ՝ անցեալին գործուած սխալներու համար զղջում:

Իսկ «աշխարհը վերաշինելու» համար կարեւոր է հասկնալ, թէ աշխարհի հաւաքականութիւնները այլազան են, եւ թէ՛ անհրաժեշտ է ընդունիլ «ուրիշ»-ը, «ուրիշ»-ը, որ տարբեր է: Պէտք է տեսնել եւ յարգել այդ տարբերութիւնները:

Եւ Պերլին քաղաքի գեղեցկութեան մէջէն սկսայ կամաց-կամաց տեսնել Պունտեսթակի որոշումին գեղեցկութիւնը: Այդ օրը Պերլինի մէջ մէկդի դրի քաղաքական հաշուարկները, որպէսզի կարենայի տեսնել եւ ըմբռնել այդ որոշումին գեղեցկութիւնը:

Պունտեսթակի որոշումը լաւ քայլ մըն էր՝ ստեղծելու «բարոյական յեղափոխութիւն»-ը: Ինքն իր պատմութեան եւ անցեալին նայելով, վերանայելով՝ փորձ մըն է սրբազրելու սխալը: Այդ «սխալը» ընդունելով՝ ճամբայ հարթելու եւ սկսելու «աշխարհը վերաշինելու» գործընթացը, որպէսզի «սխալը» չկրկնուի եւ աշխարհ կարենայ պահել իր բարոյական չափանիշները:

Այս բոլորին գուգահեռ, սակայն, առկայ է գործակիցիս պատասխանը. «Ժամանակն է նախաձեռնելու եւ որոշումներ տալու անհրաժեշտութեան»:

«Բարոյական յեղափոխութիւն»-ը խօսքէն անդին գործի վերածելու համար կարեւոր է նախաձեռնելու եւ որոշումներ տալու անհրաժեշտութիւնը: Այս մէկը կ'իրականանայ նորը շինելով եւ կամ հինը նոր հիմքերով վերաշինելով:

Պունտեսթակի որոշումը գեղեցիկ սկիզբ մըն է: Սկիզբ՝ «բարոյական յեղափոխութեան», որ ընթացք կրնայ տալ «աշխարհը վերաշինելու» քայլին: Աշխարհ մը, ուր «ուրիշ»-ը եւ «ուրիշներ»-ը կրնան նաեւ գոյութիւն ունենալ եւ ապրիլ, իրենց արժէքներով, իրաւունքներով եւ արժանապատուութեամբ:

Այդ մէկը կը ներառէ նաեւ հայուն արժանապատուութիւնը: Հայ ժողովուրդի նահատակները պէտք է հանգչին եւ հայուն ցաւը, եթէ կարելի չ'ըլլայ վերացնել, նուազագոյնը պէտք է հատուցել:

«Բարոյական յեղափոխութիւն»-ը ցաւը հասկնալու, բաժնելու եւ դարմանելու «յեղափոխութիւն»-ն է:

Կազմակերպութեամբ՝


**ԿԼԵՆՏԵՅԼԻ ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՂԻ**

**Կիրակի, Յուլիս 24, 2016**

Առաւելու ժամը 10:30-էն սկսեալ Կարօ Եւ Կնի Պերարեաններուն բնակարանէ մէջ  
 3013 Emerald Isle Dr., Glendale, CA 91206

**Մուտքի Նուէր՝ \$25**  
 Տոմսերու համար դիմել՝  
 (818) 913-9311 • (818) 284-2155

ՄԱՐԱԶԴ



ԵՂՈՒՄՅԱՆ ԹԱԹՈՒԼԵԱՆ  
1926-2016

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրելի հօր, մեծ հօր ԵՂՈՒՄՅԱՆ ԹԱԹՈՒԼԵԱՆի մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, Յունիս 11, 2016ին, Փաստինայի իր բնակարանին մէջ:

Եղուարդ Թաթուլեանը ճանչցուած էր Edo Art անունով, իր նկարչական արուեստին համար:

Իր մահը կը սգան իր ընտանիքը եւ հարազատները՝

Եղբայրը Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Թաթուլեան եւ երէցկին Արաքսի, գաւազները Ասպետ, Արփի եւ Լօրի

Ձաւակը Տէր եւ Տիկ. Ռուբէն եւ Անի Եարտըմեան եւ գաւազները Ռաֆֆի եւ Արա

Ձաւակը Տէր եւ Տիկ. Իշխան եւ Գայեանէ Թաթուլեան եւ գաւազները Արիանա եւ Ճինա

Ձաւակը Տէր եւ Տիկ. Արա եւ Իվէթ Թաթուլեան եւ գաւազները Ալէքսիա եւ Լիա

Ձաւակը Ասատուր եւ Լենա Գիգիրեան եւ գաւազները Տալիա եւ Վանայ

Քոյրը Մայտա Մանկրեան եւ դուստրերը Սալփի եւ Թալին

Եւ համայն Թաթուլեան, Մանկրեան, Տէմիրճեան, Քէչիճեան, Ռրզեան, Առաքելեան, Ձահմաճեան, Գօփուշեան, Եարտըմեան, Գիգիրեան ընտանիքները եւ հարազատները:

Յուզարկաւորութեան եկեղեցոյ կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ Յունիս 22, առաւօտեան ժամը 11:00ին, Փաստինայի Հայց. Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ 2215 E. Colorado Blvd. Pasadena CA 91107, իսկ գերեզմանի կարգը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ: Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ եւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան, Հայաստանի «Նոր Հաճըն» ականի մէջ կառուցուած յուշարձան թանգարանի վերանորոգման ծախսերուն համար:

ՅԱՅՏՆԻ ԵՆ «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»-2016-Ի

Շարունակուած էջ 13-էն

ներ Առնօ Խայաջանեանը եւ Իննա Սահակեանը պարգևատրուեցան համապատասխանաբար 7500 եւ 5000 տոլար մրցանակով:

Փակման արարողութեան ժամանակ յայտնի դերասանուհի Ժակլին Բիսեթն արժանացած է «Փարաջանովեան թալեր» յատուկ մրցանակին:

Գլխաւոր մրցանակին՝ «Ոսկէ ծիրան»-ին արժանացած են ռուս ռեժիսոր Եւգենի Գրիգորեւի «Ձախ ափի յանդիման», խոր-

ուաթ ռեժիսոր Բրանկօ Շմիդտի «Բալերի անունները», հայագրի ռեժիսոր Աննա Արեւշատեանի «Բարի լոյս», ֆրանսահայ ռեժիսոր Առնօ Խայաջանեանի՝ Հայոց ցեղասպանութեան թեմայով «Քարքարոտ ճամբաներ», հայագրի ռեժիսոր Վիգէն Արմենեանի «Ընձառիւծի լուսթիւնը» ֆիլմերը:

Այս տարի առաջին անգամ յանձնուեց նաեւ նոր՝ փառատօնի նախագահի մրցանակ, որ ստացաւ Աննա Մելիքեանը իր «Սիրո Մասին» (2015) ֆիլմի համար:

ԿԱՊՈՅՏ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ԶՐԴԵՅՈՒԱԾ ՄԵԼԳՈՆԵԱՆԵՆ

Շարունակուած էջ 15-էն

Մելգոնեանի գոյգ շէնքերէն գատ, Հաստատութեան տարածքին վրայ կար գլխաւորաբար Բարերարին Վիլլան, որ օրուան Տնօրէնին բնակարանն էր, հիւանդանոցը, խոհանոցը, ուսուցիչներուն շէնքը, սկառտարանը, Լիմասուլի ճամբուն վրայ երկու փոքր տուններ, երրորդ տուն մը (ճերմակեղէնի օրիորդին...), ջրամբարը, արհեստանոցը եւ ... նախկին խոզանոցը:

Պրն. Արամ Սարգիսեանն էր հերթապահը: Վալիզները քննուելէն ետք, ելանք ննջարան: Մահճակալ, անկողին, պահարան կարգադրելէն ետք իջանք ընթրիքի: Միջնայարկի միջանցքին մէջ շարուեցանք: «Փառք Քեզ Տէր Աստուած Մեր»ը աղօթեցին (ես չէի գիտեր տակաւին,) գացինք ճաշարան եւ տեղաւորուեցանք: Նորէն աղօթեցինք, այս անգամ՝ «Ճաշակեսցուք խաղաղութեամբ»ը: Առաջին անգամ ըլլալով Մելգոնեանի

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԼՈՒՍԻՆ ՃԷՊԷՃԵԱՆ

Հանգուցեալ ԼՈՒՍԻՆ ՃԷՊԷՃԵԱՆի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Յունիս 31, 2016ին յաւարտ Ս. Պատարագի Ս. Ղեւոնդ Մայր տաճարին մէջ՝ 3325 N. Glenoaks Blvd, Burbank, CA 91504:

Սգակիրներ  
Դուստրերը Մատլէն եւ Շաքէ Էքմէքճեան  
Թոռնուհին Օր. Սեւան  
Եւ համայն հարազատները եւ բարեկամները:  
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեսուրճ պիտի մատուցուի հանգուցեալի բնակարանին մէջ՝ 2818 Altura Avenue La Cresenta CA 91214

ՑԱՒԱՑԱԿԱՆ

ԵՂՈՒՄՅԱՆ ԹԱԹՈՒԼԵԱՆի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր քրոջ տիկ. Մայտա Մանկրեանին եւ եղբօր Արժ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. եւ երէցկին Արաքսի Թաթուլեանին:

\*\*\*

ԵՂՈՒՄՅԱՆ ԹԱԹՈՒԼԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի գաւազներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Արժ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. Թաթուլեանին:

նի թէյը, հալլում պանիրը, սալամին եւ քանի մը հատ ալ կանաչ ձիթապտուղը ճաշակեցի: Շատ համով էր մանաւանդ ցորենի հացը եւ թէյը:

Երեկոյեան, ննջարանի անկողիններուն վրայ թէ վարը դասարաններուն մէջ, նախկին Մելգոնեանցիները, հիները, իրենց տաքուկ յուշերը եւ ամրան ընթացքին իրենց «հերոսութիւնները» կը պատմէին իրարու: Նորերս, ապշած, նախանձով կը դիտէինք զիրենք: Ե՞րբ մենք ալ պիտի կարենայինք այս խանդավառութեամբ, այս ջերմութեամբ զրուցել իրարու հետ:

Մանչերու ննջարանը ընդար-

ձակ տեղ մըն էր, ֆութպոլի կէս դաշտի չափ: Անկողինները շարուած էին դասարաններու շարքով: Պատերուն տակ շարուած էին պահարանները: Սկսած էինք վալիզները պարպել, տեղաւորել պահարաններուն մէջ: Աղմուկ, աղաղակ, իրարանցում, խնդուք, վազվզուկ, Աստուած իմ, ինչ «թաշխալաց» է այս: Սակայն այս ընդհանուր իրարանցումին մէջ նշմարեցի որ մեծ տղաքը, հին աշակերտները, կ'օգնէին նորեկներուն:

Ճրագամարէն ետք, փսփսուքները շարունակուեցան տակաւին, բայց շուտով լուսթիւն տիրեց եւ ... «Գիշեր Բարի»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ  
Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.  
Name: -----  
Address: -----  
City: ----- State: ----- Zip Code: -----  
Country: -----<sup>3</sup>  
Tel: ----- Email: -----

### ԱՐԹՈՒՐ ԱՐԱՐԱՍԸ ՆՈԿԱՌՏՈՎ ՅԱՂԹՅ ԿԱՐԻԵՐԱՅԻ 50-ՐԴ ՄԵՆԱՄԱՐՏՈՒՄ



Պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում աշխարհի նախկին ախոյեան Արթուր Աբրահամը Յուլիսի 16-ին անցկացրեց կարիերայի 50-րդ մենամարտը՝ 30-րդ անգամ յաղթելով նոկաուտով:

Պեւիտում կայացած մենամարտում հայ բռնցքամարտիկի մրցակիցն էր նորվեգացի Թիմ Ռոբին Լիհոլդը, որը պարտուեց 8-րդ ռաունդում:

Առաջին ռաունդում 36-ամեայ Աբրահամն աւելի լաւ տեսք ունէր, իսկ երկրորդում աւելի ակտիւ էր մրցակիցը: Մենամարտի սկզբնամասում 23-ամեայ նորվեգացին աւելի շատ էր հարուածներ կատարում, սակայն դրանք չէին հասնում նպատակին, իսկ Աբրահամն աչքի էր ընկնում վատահաստակութեամբ: Արթուրի առաւելութիւնն ակնյայտ դարձաւ 5-րդ ռաունդում, երբ նրա հարուածների շարքից յետոյ Լիհոլդը դժուարութեամբ մնաց ոտքի վրայ: Յաջորդ 2 ռաունդներում եւս Աբրահամը գերազանցեց մրցակցին եւ միաւորներ վաստակեց: 8-րդ ռաունդում նա նախ նոկաուտի ենթարկեց մրցակցին, որը փորձեց շարունակել մենամարտը, սակայն իսկ քիչ անց մրցավարը ստիպուած էր դադարեցնել այն:

Արթուր Աբրահամը 45-րդ յաղթանակը տարաւ պրոֆեսիոնալ ուինգում, որում կրել է նաեւ 5 պարտութիւն:

Յիշեցնենք, որ հայ բռնցքամարտիկի քաշը 76.2 կգ է, իսկ Թիմ Ռոբին Լիհոլդինը՝ 76.0: Արթուր Աբրահամը նախորդ մենամարտն անցկացրել է այս տարուայ Ապրիլի 10-ին Լաս Վեկասում, որտեղ մրցավարների միաձայն որոշմամբ (108:120, 108:120, 108:120) պարտուել էր մեքսիկացի Ջիլբերտո Ռամիրեսին՝ կորցնելով աշխարհի ախոյեանի տիտղոսը:

### ՎԻԿ ԴԱՐՉԻՆԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵԼ Է ՆՈԿԱՌՏՈՎ

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի թեթեւագոյն քաշային կարգում աշխարհի նախկին ախոյեան Վիկ Դարչինեանը ԱՄՆ-ի Ալաբամա նահանգի Բիրմինգհեմ քաղաքում վարկանիշային մենամարտ է անցկացրել 25-ամեայ մեքսիկացի Սերխիօ Ֆրիաս Գուտիերեսի հետ:

8 ռաունդից բաղկացած մենամարտում 40-ամեայ Վիկ Դարչինեանը պարտութիւն է կրել արդէն երկրորդ ռաունդում ենթարկուելով նոկաուտի:

Վիկ Դարչինեանը 52-րդ մենամարտն անցկացրեց պրոֆեսիոնալ ուինգում: Նա կրեց 6-րդ պարտութիւնը: Նախորդ երկու մենամարտերում Վիկ Դարչինեանը յաղթանակ էր տարել:

### ՖԻՖԱԻ ԱՂԻՍԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՈՒՋԱԴԻՄԵԼ Է



Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը ՖիֆԱ-ի դասակարգման աղիւսակում առաջադիմել է 8 աստիճան եւ յայտնուել 102-րդ տեղում: Նախորդ հրապարակումից յետոյ Հայաստանի թիմը հանդիպումներ չի անցկացրել, իսկ մինչեւ այդ ԱՄՆ-ում կայացած ընկերական խաղերում յաղթել էր Գուատեմալային (7:1) եւ էլ Սալվադորին (4:0):

Դասակարգման աղիւսակի լաւագոյն հնգեակում փոփոխութիւն չկայ: Առաջատարն աշխարհի փոխախոյեան Արժենտինան է, որին յաջորդում է Պելզիան: Կոլումբիան երրորդն է, աշխարհի ախոյեան Գերմանիան՝ չորրորդը, իսկ Ամերիկայի գաւաթակիր Չիլին՝ 5-րդը:

### ԵՐՈՊԱՅԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈՒՍԻ ԿՈՉՄԱՆ ՅԱԻԱԿՆՈՐԴՆԵՐԸ

ՈւեթԱ-ն հրապարակել է 2015-2016 թուականների եւրոպական մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստի կոչման յաւակնորդների եզրափակիչ տասնեակը:

Յաղթողը յայտնի կը դառնայ Օգոստոսի 25-ին Մոնաքոյում կայանալիք արարողութեան ժամանակ: Օգոստոսի 5-ին ՈւեթԱ-ն կը հրապարակի եզրափակիչ եռեակը:

- Գարեթ Բեյլ («Ռեալ», Ուեյլ)
- Ջանլուիջի Բուֆոն («Յուււենտուս», Իտալիա)
- Անտուան Գրիգման («Աթլետիկո», Ֆրանսա)
- Տոնի Կրոս («Ռեալ», Գերմանիա)
- Լիոնել Մեսի («Բարսելոնա», Արժենթինա)
- Թոմաս Միլեր («Բաւարիա», Գերմանիա)
- Մանուէլ Նոյեր («Բաւարիա», Գերմանիա)
- Պէյլէ («Ռեալ», Փորտուգալիա)
- Կրիշտիանու Ռոնալտու («Ռեալ», Փորթուգալիա)
- Լուիս Սոււարէս («Բարսելոնա», Ուրուգուայ)

### ՉԼԱՏԱՆ ԻՐԱՅԻՄՈՎԻՉ. ԿԼԻՆԵՄ «ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ԱՍՏՈՒԱԾԸ»

«Մանչեսթեր Եունայթեդ» շուէտ յարձակուող Ջլաստան Իբրահիմովիչը կատակով յայտարարել է, որ ինքը կը լինի ակումբի ոչ թէ թագաւորը, այլ՝ աստուածը: «Մանչեսթեր Եունայթեդ» նախկին աստղ էրիկ Կանտոնան կատակել էր, թէ «ողջունում է Իբրահիմովիչին «Մանչեսթեր Եունայթեդում», սակայն նա միայն կարող է լինել ակումբի արքայը, քանի որ թագաւորի տիտղոսն իրենն է: Երկրպագուներն են Կանտոնային անուանում «Մանչեսթերի արքայ»:




«Ես լսել եմ, թէ ինչ է ասել Կանտոնան: Նա ինձ միշտ հիացրել է: Բայց նա պէտք է իմանայ, որ ես չեմ պատրաստուում լինել Մանչեսթերի արքան: Ես կը լինեմ Մանչեսթերի աստուածը», - Իբրահիմովիչի խօսքը մէջբերում է aftonbladet-ը:

Յիշեցնենք, որ Յուլիսի 1-ից 34-ամեայ Իբրահիմովիչը ազատ գործակալի կարգավիճակում էր եւ մէկ տարուայ պայմանագիր կնքեց «Մանչեսթեր Եունայթեդ» հետ:

Այս շաբաթ նա կը սկսի մարզումները ժողէ Մոուրիսիոյ գլխաւորութեամբ:

### ԼԻՈՆԵԼ ՄԵՍԻՆ Կ'ԵՐԿԱՐԱԶԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ »ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ« ՀԵՏ

Արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին մօտ է «Բարսելոնայի» հետ պայմանագիրը երկարաձգելուն: Պրագիլացի յարձակուող Նեյմարի հետ պայմանագիրը երկարաձգելուց յետոյ կատալոնական ակումբի առանջնահերթային նպատակը Մեսիի հետ համագործակցութեան երկարաձգման ամրագրումն է:



29-ամեայ ֆուտպոլիստի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2018 թուականը: Կողմերը բանակցել են մինչեւ 2021 թուականը երկարաձգելու մասին: Արձակուողից Մեսիի վերադառնալուց յետոյ կը կնքուի նոր պայմանագիր, հաղորդում է Mundo Deportivo-ն:

Ամերիկայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում Չիլիին պարտուելուց եւ Սպանիայում 4 միլիոն եւրօ հարկ չվճարելու համար 21 ամսուայ պայմանական ազատագրման դատապարտուած Մեսին ընտանիքի հետ հանգստանում է Իբիցայում:

Եւրոպայի նորընծայ ախոյեան Պորտուգալիայի հաւաքականը առաջադիմել է 2 տեղով եւ 6-րդն է: Լաւագոյն տասնեակում են նաեւ՝ Ֆրանսան, Սպանիան, Պրագիլիան ու Իտալիան:

Աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականի մրցակիցները Լեհաստանը 16-րդն է, Ռումինիան՝ 24-րդը, Դանիան՝ 44-րդը, Չեռնոգորիան՝ 95-րդը, իսկ Ղազախստանը՝ 97-րդը:

Յիշեցնենք, որ ԱԱ-2018-ի ընտրական փուլից առաջ Հայաստանի հաւաքականն Օգոստոսի 31-ին Պղզենում ընկերական խաղ է անցկացնելու Չեխիայի հետ, որը 33-րդ տեղում է: